ԲԻԲԱԿՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԺԱ. ՏԱՐԻ | ԹԻՒ 213 | ՍԵՊՏԵՄԲԵՐ 13/1 1893

1. Բիւրակն առ այժմ ամիսը անգամ մը կը հրատարակուի : — **2**. Տարեկան գինն է ամէն տեղւոյ համար 1 ½ Մէճիտիյէ, թղթատարութեան ծախքը մեր վրայ ըլլալով : — **3**. Զեռէ կը ծախուի 100 փարայ : — **4**. Բաժանորդ գրուիլ ուզողներ դիմելու են կամ իրենց հասցէն դրկելու են առ խմբագիրն Գրաստուն եւ Տպագրատուն Գ. Պաղտասլեան, Կ. Պոլիս Սուլթան Համամ փողոց թիւ 14, կամ ի Պայպուրդ Հաուզ : — **5**. Բիւրակնի վերաբերեալ ամենայն գրութիւնք եւ բաժանորդական վճարումներ պէտք է ուղղել առ խմբագիրն : — **6**. Անվճար նամակ կամ ո եւ է գրութիւն չընդունուիր : — **7**. Տասն օրինակի համար բաժանորդ գտնողին մէկ օրինակ ձրի կը տրուի :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խորհուրդք հաւատացելոյ : — Ներքին տկարութիւն : — Ոսպնաձեւք եւ ակնոցք : — Աւարտ գործունէութեան մեծութիւնն ամենափոքր ճգիներու վրայ : — Առ հաւատացեալս դաս Ը. : — Իմաստից քանք : — Մարդուն կոչումը : — Գեղարուեստք : — Տեղագրութիւն : — Անգղիական առակներ : — Դոլմպեան արուեստանոցէն գլխաւոր շինութիւնք : — Երկնային օտարականը : — Ընտրողութիւն բարիին եւ չարին մէջտեղը : — Մանկութիւն : — Աբեւելեան որբանոց ի Պրուսա : — Բոպէրի Գօլէճ : — Ազգային : — Քաղաքական : — Նոր հրատարակութիւնք :

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՀԱԻԱՏԱՑԵԼՈՑ

Բիւրակնի 211րդ թուոյն մէջ խօսեցանք համառօտիւ սոյն գրքին առաջին չորս գլուխներու բովանդակութեան վրայ, խոստանալով չարունակել մեր դիտողութիւնները միւսց գլուխներու նկատմամբ ևս : Ասոնցմէ առաջինն է Բանաւորականութեան նուիրեալ գլուխը զոր հեղինակը սկսած է տալով հակիրճ բայց հաւատարիմ բովանդակութիւն մը սոյն դրութեան վարդապետութեանց : Ըստ այնմ դրութեան, վերին յայտնութիւն եթէ ոչ անհնար գէթ անհեթեթ է ըսելի, կըսէ, «Բանն կը պահանջէ հաւատալ թէ Արարիչն ի հարկէ օժտած է զմարդ այն ամէն կարողութիւններով որք անհրաժեշտ են անոր կարեւոր պիտոյից լրման, իր առջեւ ունենալով բնութեան յայտնութիւնները որք զմեզ կը չրջապատեն և որոցմէ կընդունի մարդ իւր մտաց գործունէութեան պաշարն, անտարակոյս ուսանել պարտիմք բայց ուսանել բնութեան յայտնութիւնէն մեր մտաւոր կարողութեանց առաջնորդութեամբ :» Հեղինակն իր պատասխանին մէջ խնդրոյն բնութիւնը ի նկատ առնելով, կըսէ, «Արարչին իրրեւ էակ անձնաւոր, ի պահանջել հարկին իւր բանական արարածոց հետ մտնաւոր յայտնութեամբ հաղորդութեան մտնելուն գաղափարը ինքնին անհեթեթ չէ, բաւ է թէ, ընդունի ոք ի վեր քան զբնութիւն անձնաւոր էութեան մը գոյութիւնը և արարածին հոգեկան բնութիւնը : Երկրորդ,

Բարոյական վերականգնման կարօտ մարդկութեան համար քաւութեան և ներման պայմանաց Ամենասուրբ Օրէնսդրէն ակնկալելու գաղափարին մէջ չ'կայ անհեթեթ բան մը, քաւ է թէ, ընդունի ոք մարդոյ բարոյական բնութեան տէր և գիտակից լինելն բարոյական յանցանաց և արժանի պատժոյ։ Քանզի արդարեւ բնութիւնը կը թելադրէ աստուածային ներկայութիւն և մեր առնչութիւնն Արարչին հետ, բայց անդր քան զայս յայտնութիւն չունի։» Հեղինակին առաջին պատասխանը շատ գեղեցիկ կը պատչաճի աստուածային էութեան հոգեկան ստորոգելեաց, Նորա հայրութեան և մարդոյ որդեգրութեան գաղափարին, որք Քրիստոնէական են։ Երկրորդը, մարդոյ բարոյական անկման, ապաշխարութեան, քաւութեան և աստուածային ներմամբ իւր ժառանգ եղած կոչման մէջ վերստին հաստատուելու պէտքի մը գաղափարին հետ որ է Նուիրական Մատենից բովանդակութիւն։ Աստուածաշունչ Մատենից առաջին գլուխն սկսելով կուսանիմք թէ մարդ իւր անմեղութեան մէջ մտերիմ հաղորդութիւն ունէր Արարչին հետ, բայց որոյ գէմ մեղանչելով խոյս տուաւ Ամենակալին երեսէն և հեռացաւ Նորա մտերմութենէն և հուսկ յետոյ վտարուեցաւ իւր մտերմութեան վայրէն, և ընդունեց վճիռ անիծից։ Մարդ արդարեւ վտարուեցաւ աստուածային մօտաւորութենէն բայց ոչ առանց խոստման վերականգնելու կրկին ի չնորհս Նորա, և ոչ առանց առարկայ ըլլալու անմիջական հոգածութեան և խնամոց։ Մարդկային ազգի կրօնական պատմութիւնն է պատմութիւն մարդոյ պատժապարտութեան զգացման և չնորհաց մէջ վերստին հաստատուելոյ հաւատոյն ծնունդած երեւոյթներուն։ «Մարդ,» կըսէ, հեղինակը, «իրաւէտ է մեղաց և բարոյական տկարութեան, կ'զգայ թէ կորուսած է որդիական աղերսը և օտարացած է Արարչէն, գիտէ և կ'զգայ տակաւին թէ որը չէ ջնացած։ ուստի և զնետ է աստուածային կամաց գիտութեան և յայտնութեան, կը խընդրէ միշտ հնարս և միջնորդ հաշտութեան, ակն ունի ընդունել ներումն և կ'սպասէ որդեգրութեան։» Մարդկային հոգւոյն մէջ կայ, կըսէ, «մասնաւոր զգացում մը, զոր մարթ է կոչել սրտի դատում որ կուտայ մարդոյ իւր օտարացեալ վիճակին մէջ յուզուիլ և ճնշուիլ այնպիսի իմն բարոյական վշտով՝ որոյ աղբեցութիւնը տարբեր է հասարակ չարագործութեան ազդեցութենէն։ խոր ապաւորեալ զգացումն է որ կ'զգացուի մարդոյն յարաբերութեան սահմանին մէջ ընդ Աստուծոյ, յարաբերութիւն՝ որոյ կորըստեան գիտութեան հետ ունի մարդ վերստին հաստատութեան յոյսը։» Զպարտիմք մոռնալ թէ փիլիսոփայութեան կոչումը չէ անգիտանալ կամ արհամարհել մարդկային ընդունակութիւնները, այլ մշակել և առաջնորդել իրեն արժանաւոր վախճանին։ Բանաւորականութիւնը որ այլ իմն անուն է աստուածեանութեան, անբանաւոր կը գտնէ զայս ամենայն, քանզի անոր դաւանած Աստուածը Քրիստոնէական ամենակալ Հայրը չէ, նա լոկ գործակատարութեան գաղափար մ'է որ առ առաւելն բանական

զօրութիւն մ'է որ կանգնի տիեզերաց մեքենային դլուխը իբրեւ վարիչ որոյ միակ պաշտօնն է կատարել տեսչութիւնն բնական օրինաց որք վարին ինքնին իբրեւ ի հարկէ և ոչ թէ կամօք։ Բանաւորականութեան այս Աստուածն չունի մարդոյ հետ առաւել կամ մօտաւորագոյն առընչութիւն քան ուրիշ բոլոր էութեանց հետ։ Անտարակոյս Աստուծոյ վրայ այսպիսի տեսութիւն մը ոչ միայն երկնաւոր և մանաւոր յայտնութեան գաղափարը՝ այլ բարոյական համաբաւութեան գաղափարը անհեթեթ կընէ։ Ըստ բանաւորականութեան բարոյական եղծումը կամ մեղքը չէ այլ ինչ, այլ բարոյական տհասութիւն որ արդիւնք է մարդութեան անչափահասութեան, և նման այլ թերութեանց ինքնին բնական ընթացքով կը դարմանի և կը կատարելագործի։ Սրտէ զուրկ փիլիսոփայութիւնը Աստուծոյ և անոր հետ մարդոյ առնչութեան վերայ ասկէ աւելի գիտութիւն կարող չէ ունենալ, և բարոյական չարեաց նկատմամբ չունի այլ հայեացք բայց իբրեւ ընկերային թերութիւն մը՝ որ միայն կրթութեան է կարօտ։ Մարդկութիւնը պէտք չունի այսպիսի Աստուծոյ մը և ոչ տագնապ կզգայ մարդ մեղաց համար երբ կը նկատէ զայն լոկ թերութիւն։ Չի մարդ կորսուած է խաղաղութիւն մը զոր անհնար է վերստին գարձնել զգալեաց աչխարհի վերաբերեալ իւիք։ Երկրաւոր ինչ չէ հնար ընուլ զտեղին որ սահմանեալ է Աստուծոյ։ Թող մարդիկ գիտնան որ փիլիսոփայութիւնը Քրիստոնէին ձեռքէն կենդանի Աստուածը առնելէն ետք ի՛նչ կրնայ տալ։

Վեցերորդ դլուխը նուիրեալ է դրականութեան, դրականութիւն, որպէս հեղինակն կըսէ, պարզապէս զգալեաց փիլիսոփայութիւն է։ Եւ որովհետեւ ինչ որ լոկ մտօք ըմբռնելի է զուրկ է դրական ապացուցութենէ։ ապա ըստ դրականութեան պատչաճ չէ դնել զայսպիսիս ի կարգ ստոյգ գիտութեան։ և բնապէս ինչ որ չէ ստոյգ գիտութեան, արժան չէ դնել իբրեւ հիմ կենաց և կանոն վարուց։ կարելի է գուշակել ինչ ինչ զէութենէ և զստորագելեաց Արարչին, բայց գուշակել միայն, և գուշակել բաւական չէ հաւատալու համար։ Այսպէս դրականութիւն կը համարէ ընդունելութեան արժանի ինչ որ ստուգելի չէ զգայնօք։ ապա Աստուած իբրեւ էակ պաշտելի և ամենայն ինչ որ նմա կը պատկանի, կը մնան անծանօթ և անգիտելի։ վարդապետութիւն որ զմարդ անբանից կարգին կիջեցնէ։ Տուր առաքինութիւն զգալոյն՝ և յայնժամ կը դնես զմարդ այնպիսի դրից մէջ որ ոչ միայն կը կորուսանէ առիթն մտաւոր և հոգեւոր կենաց մշակութեան և զարգացման, այլ և կը խանգարէս մարդոյ էութեան հաւասարակշռութիւնը իբրեւ իմաստուն և հոգեւոր էակ։ Գրքին մէջ ընդ երկար բացատրուած է սա կէտն, թէ տալով պատչաճ տեղ մը զգալոյն կարեւոր իրաց մէջ և ընդունելով անհրաժեշտ պիտանութիւն կրթելու զմեզ հոգեւոր իրաց մէջ, պարտիմք զայն ստորադաս ընել մտաւորէն և հոգեւորէն միւնչեւ անգամ ստուգութեան մասին։ քանզի, կըսէ, զգայականին պաշտօնն է միջնորդական, մինչ մտա-

ւորին ա՛նկ է ճանաչել և վճիռ տալ։ Մեք գիտեմք աւելի զբնութենէ և զիրաց որ կան բովանդակեալ ի նմա՝ վերանալով անդր քան զզգալիս։ Մտաց կարողութիւնք են որ կը կատարեն զբարձրագոյն դէրն ի գիտել լինչ։ Ապա մեր էութեան իմացող մասին վկայութիւնը ոչ պարտիմք համարել նուազ արժանի հաւատարմութեան և վստահութեան ի բարձրագոյն ծանօթութիւնս քան ի խոնարհագոյնս։ Ապա կը խօսի կարգ մը բաներու վրայ ցոյց ընելու թէ զուտ մտաց դործք աւելի վստահելի են քան այն գործերն, որք հիմնեալ են զգայնոյ մատուցած փորձի և գիտողութեան վրայ։ Արդէն գիտնալը զուտ մտաց դործ է, և մարդոյ սխալականութիւն արգելիչ չէ մտաց յառաջադիմութեան ճշմարտութեան մէջ հաստատուն և անվրէպ։ Կը բաժնէ զգիտութիւն երեք դասի. կըսէ, «ըստ բերման երեակ բնութեան մարդկային կազմութեան, կան գիտութեանց երեք դասք որոց մին կոչի փորձական, միւսն մտաւոր և երրորդն բարոյական կամ աստուածաբանական։ Առաջինը, կըսէ, կընծայէ մեզ զգալի իրերն և եղելութիւններն, երկրորդն տայ նոցա բանաւոր մեկնութիւն, և երրորդն կը յայտնէ մեզ մեր յարաբերութիւնն այն բանական էութեան հետ որ է վարիչ տիեզերաց»։ Դնելով առաջինն իբրեւ խոնարհագոյնն կը դնէ աստուածաբանութիւնը գիտութեանց բարձրագոյն։ Կրկին կրկին ընթերցման արժան են այն հատուածներն որովք կը բացատրէ թէ կարո՛ղ եմք գիտել զԱստուած։ Թէ ո՛րպիսի կարողութիւններով օժտեալ եմք ճանչել և գիտել զՃշմարտութիւն։ Կարելի չէ թողուլ այս գլուխը առանց յիշելու այն գիտողութիւնը ընդդէմ այն առարկութեանց զորս Քրիստոնէութեան հակառակորդք մէջ կը բերեն չանալով ներկայացնել զՔրիստոնէութիւն իբր յառաջադիմութեան հակառակ ազդեցութիւն մը։ Կըսէ, «արդարեւ Քրիստոնէութիւն կը վարէ յառաջ իւր սկզբունքներն, ընթացյիւք զորս փիլիսոփայութիւն յիմարութիւն կանուանէ», բայց արդեամբ կը ցուցնէ թէ փիլիսոփայութիւնը և ոչ թէ Քրիստոնէութիւն սխալ է։ Քրիստոնէութիւն պատուականագոյն աւիթ կընծայէ ընկերութեան բարգաւաճման և բարւոքման փիլիսոփայութեանը, փիլիսոփայութիւն որոյ դրականութիւն է չատագով։ «Մարդիկ, կըսէ, «որչափ աւելի չարժին բանականութեան, բարոյականութեան և Աստուծոյ գաղափարներով՝ այնչափ աւելի կունենան ծնայուն ընդունարձակ զօրութիւն և ազդեցութիւն առ ի կատարել և տալ կատարել առաքինութեան գործեր։» Որչափ մարդոց զգացմունք ձգին և ընդարձակին անդր քան զզգայականն և յառաջանան և բարձրանան մինչեւ ի մերձաւորութիւն գերբնականին՝ այնչափ կը մշակուի և կազնուանան այն զգացուածներն որ կարեւոր են բարձրացնել և երջանկացնել մարդկային ընկերութիւնը։ Չի մարդոց առաջնորդն է անոնց ներքին կարողութեանց վկայութիւնը մանաւանդ քան որ և է արտաքին վկայութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ

Ա.յն անհանդարտութիւն որով մարդիկ և կանայք առ հասարակ կը տառապին՝ վիրենք չրջապատող իրերէն չգար ինչպէս իրենք ընդհանրապէս կը կարծեն, այլ կուգայ բուն իսկ իրենցմէ։ Ամէն մարդ պէտք է սորվի սա հին ճշմարտութիւնն թէ մարդս երջանկութիւնը և գոհունակութիւնը չէ թէ կը գտնէ այլ իր մէջը կը կրէ։ Միշտ պատասխանատուութիւնը կը բեռցնեմք մեզ չրջապատող իրաց և մեր վիճակներուն, մինչդեռ մեր անձին կը վերաբերի այն, և միշտ կը ջանամք զմեզ չրջապատող իրերէն և մեր ինչ ինչ վիճակներէն ստանալ այն բանը զոր միայն մեր աշխատութեամբ կրնամք ստանալ։ Մեր բնութեան մեծութեան մէկ նշանն է սա թէ մենք մեր մէջ կը կրենք երջանկութեան կամ ապերջանկութեան սերմերն։ և թէպէտ սերտ և անհրաժեշտ յարաբերութիւններ ունիմք աշխարհին հետ՝ տակաւին հիմնապէս անկէ անկախ եմք։ Աշխարհ ինքնին ոչ կարող է տալ խաղաղութիւն և գոհունակութիւն, և ոչ ալ կարող է առնուլ զանոնք մեզմէ։ Խաղաղութեան գաղտնիքը անձնիշխանութիւն է, կարող ըլլալ առանձնորդել և կառավարել մեր ներքին կեանքերն, անձին խորհուրդը հաւէտ պահել։ Եւ ազատաբար ընդունել այն ամէնը զոր կեանքը կը մատուցանէ մեզ, նոյն ատենը ի պատասխանի մեր ընդունածներուն՝ ինքնաբերաբար կատարել մեր գործունէութիւնները։ Այս անձնիշխանութիւնը ամենէն աւելի որոշ կերեւի բուն մեր անձին վրայ չատ չխորհելուն մէջ։ Շատ բարի մարդիկ և կիներ կան որ կը տառապին իրենց անձին խորհուրդովը, անձը կուգայ ներս կը մտնէ այն վայրկենին երբոր յստակ միջոց մը և յստակ տեսութիւն մը կարեւոր է։ Այսպիսի մարդիկ քիչ անգամ կը պատահի որ նային մաքուր և յստակ մթնոլորտի մը մէջէն կը տեսնեն այնպիսի մթնոլորտի մը մէջէն որ կը խեղաթիւրէ և կը չափազանցէ ամէն առարկայներն։ Փոխանակ իրենց ընկեր ունենալու աստղերն երկար և դժուարին ուղեւորութեան մէջ, ճամբուն փոշին կը հանեն այն աստիճան որ երկինքներն կը մթնցնան։ Փոխանակ տեսնելու աշխարհը յստակաբար և հաստատապէս՝ կը տեսնեն զայն միշտ իրենց անձին ունեցած յարաբերութիւններուն, փոխանակ ամէն խնդիր որոշելու յստակ և ուշիմ կերպով, կը չփոթեն և կը չուարեն անձնական տարրը անոր մէջ մտցունելով։ Այս տեսակ բնութիւն մը [հասել չեմք կրնար կոչել, վասնզի այս կարգի մարդիկ չատ անգամ անձնասէր չեն և աստիճանաւ մը առատասիրտ են, իրենց տկարութիւնն է յաւէտ չափէ աւելի զգալ իրենց անձնականութիւնը։ Եւ սա տկարութիւն մ'է. որովհետեւ բնութեան ներդաշնակութիւնը կը խանգարէ, աճման ընդունակութիւնը կը նուազեցնէ և կը խանգարէ անոր հանդարտութիւնը և գոհունակութիւնը։ Ամէն ամենախորին խորհուրդներն յառաջ կուգան մեր անգիտակցութիւններէն։ երբ խորասէս կը հանգչիմք Աստուծոյ վրայ՝ այս վիճակը որքան որ աւելի ունենանք այնքան աւելի հարուստ, զօրեղ և մեծ կըլլանք։ Այս տեսակ կեանք մը կարեւոր է

Աստուածոյ տուած ամբողջ կեանքը վայելելու համար, պէտք է հեռանամք մեր փոքր անձերուն ծանծաղուտներէն և պարզեմք մեր առագաստներն ճշմարտութեան, գործի և կեանքի անեզր ծովուն վրայ։

ՈՍՊՆԱՁԵՒՔ ԵՒ ԱԿՆՈՑՔ

Թէ արդեօք հիներն գիտութիւն ունէի՞ն ոսպնաձեւ ապակիներու վրայ իբր առարկայները մեծցնելու միջոց՝ միշտ վէճի առարկայ եղած է։ Ասորական ոսպնաձեւ ապակի մը գըտնուած է, բայց ասկէ զատ որ և է ապացոյց չկայ թէ հիներն կը գործածէին զայնս նոյն նպատակին համար։ Քիչեաչ ոսպնաձեւը, այժմ Բրիտանական թանգարանին մէջ Բիւրեղեայ ժայռի կտոր մ'է զոր Լէյարտ գտած է Նիմրոտի պալատին աւերակաց մէջ։ Կը կարծուի թէ 721—705 Ն. Ք. չինուած ըլլայ այն։ Անոր նպատակը կամ ինչ բանի գործածուիլը քիչ մը տարակուսելի է, քանզի մինչդեռ յայտնի է իր ձեւէն թէ ունի մեծցընող զօրութիւն և տեսակ մը վառարան, բիւրեղին անկանոն չինուածքը և անոր կշտութիւնը և ողորկման ու յղկման անկանոնութիւնը զայն անարժէք կընեն իբր մեծցնող գործի։ Ի բացակայութեան այլ ապացոյցի չատ աւելի հաւանական է թէ այս բիւրեղ պատրաստուած էր զարդի համար։ Նաեւ հաւանական է որ երբէք հիներն կը գործածէին մեծցնող ոսպնաձեւ ապակիներ մեր ձեռքը եղածներէն աւելի լաւ ապացոյցներ պիտի ունենայինք։ Բունաց հեղինակներէն Հիփոքրատի, Կալէնի և Ալէքսանդրի պէս հեղինակաց գործերն և Հռովմայեցիներէն Կելսոսի և Աւրելիանոսի նման հեղինակաց գործերն ուշի ուշով քննուած են, և հմուտ հեղինակ մը կըսէ թէ «ոչ մէկ հին հեղինակի մէջ կը գտնեմք որ և է յիշատակութիւն մը ակնոցներու կամ խոշորցնող ոսպնաձեւներու կամ մանրացոյցներու։»

Այս հեղինակներն իրենց ժամանակի նշանաւոր բնագէտներն էին և ամէնքն ալ տեսաբանութեան նիւթին վրայ գործեր թողած են։ Զկրնար կարծուիլ թէ այս հեղինակներն բնաւ ակնարկ մը պիտի չընէին աչաց տեսութեան արուեստական օժանդակութեանց երբէ իրօք ի գործածութեան ըլլային անոնք։

Ամերիկացի մեծանուն ատենաբան, Ուէնտէլ Փիլիփս կորուսեալ Արուեստից վրայ իր հետաքրքրաշարժ բանախօսութեան մէջ խօսած է հիներուն ճարտարութեան վրայ թանկագին քարերու փորագրման մէջ։ որոց օրինակներն կը տեսնուին այլ և այլ թանգարանաց մէջ, և ուզած է փաստ մը հանել անկէ թէ պէտք է որ գիտցած ըլլային խոշորցնող ապակիներու գործածութիւնը, սակայն ուրիշ հեղինակներ հաստատած են թէ բոլոր այն փորագրութեանց մէջ չկայ մէկ հատ մը որ չկրնայ չինուիլ լոկ աչքի տեսութեամբ։

(Շարունակելի)

Ուշիմ մարդուն հանճարը այն կէտին մէջ կը փայլի, որ գործքի կամ որ և է ձեռնարկութեան ատեն իրաց վիճակը ու պարագաները կը ճանչէ, կը հաշուէ և ըստ այնմ կը վարուի։

ԱՐԱՐՁԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՆԱՓՈՔՐ ՃՃԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յայտնի է Թէ ջրոյ, մանաւանդ կեցած ջրոյ մէջ միլիոնաւոր փոքրիկ ճճիներ կ'ապրին, զորոնք մարդուն աչքը չի կրնար տեսնել, քանի որ տեսադաշտական գործեաց չի դիմեր։ Բնական պատմութեան մէջ կը կարդանք՝ Թէ այս ամենափոքր ճճիներու մեծութիւնը $^1/_{20}$—$^1/_{1000}$ միլիմէտր է։ Ինչպէս որ մարդուս միտքն աստղաբաշխութեան սա վճռէն՝ Թէ արեգական երկրէս հեռաւորութիւնը 20 միլիոն աշխարհագրական մղոն է, նոյն հեռաւորութեան վրայ մերձաւոր գաղափար մը չի կրնար կազմել, նոյնպէս եւս բնական պատմութեան այս մասին աւանդածն պայծառ ըմբռնել անկարելի է, եթէ օրինակներու դիմելով՝ նոյնը մեզի զգալի ընելու չաշխատինք։ Այս անսահման մեծութեան եւ անսահման փոքրկութեան մասին գաղափար մ'ունենալու մարդուս տկար մտաց կուտան կ'ըլլայ այլեւայլ համեմատութիւններ։ Մէկն արեգական երկրէս հեռաւորութեան վրայ շատ աւելի ուղիղ գաղափար կ'ունենայ, եթէ իրեն ըսուի՝ Թէ ժամու մը մէջ 90 քիլոմէթր ճամբայ ընող եռպընեաց շոգեկառք մ'անընդհատ ընթանալով 1800 տարուան մէջ երկրէս արեգակ կը հասնի, քան՝ եթէ ըսուի, որ սոյն հեռաւորութիւնը 20 միլիոն աշխարհագրական մղոն է։ Այս եղանակաւ շատ աւելի դիւրաւ կը հասկընանք ամենափոքր սպառածոց զարմանալի եւ անսահման փոքրկութիւնը հետեւեալ փորձերով։

*Գաւաթ մը ջրոյ մէջ քանի մը կտոր բուսեղէն եւ քանի մը կաթիլ քացախ դնելէն վերջը՝ նոյնը 3—5 օր խաղաղ ձգելու է։ Այնուհետեւ վրձինով մը նոյն գաւաթէն ըստ կարի փոքր՝ գնդասեղի գլխուշափ փոքրիկ կաթիլ մ'առնելու եւ մաքուր ապակւոյ մը վրայ դնելու է. սոյն ապակւոյ վրայ ուրիշ երկրորդ բարակ ապակի մ'ալ դնելու է, այնպէս որ կաթիլը նուրբ խաւի մը պէս տարածուի եւ յառաջուընէ աւելի տեղ գրաւէ։ Երկրորդ ապակին առաջնոյն վրայ այնպէս դնելու է, որ աչքով երկուքին մէջ միջոց չերեւայ եւ բարակ թուղթ մ'երկուքին մէջ չկարենայ մտնել։ Մ'ինչ կ'ապրելի է որ սոյն անճառելի միջոցին մէջ ճճիներ ապրին եւ ազատ շարժին։ Ի՞նչ կը ցուցնէ 50 պատիկ մեծցընող մանրադիտը· այլեւայլ մեծութեամբ եւ պէսպէս ձեւով կենդանի ճճիներու բազմութիւն մը։ Ասոնց մեծ տեսակները բաղի կը նմանին, Թափանցիկ են եւ մազոտ· փոքրագոյնները ձկան կը նմանին։ Ամենէն փոքրիկներն արագ արագ գալարելով կը շարժին, դերձանի կամ գնդակի նման են եւ երկայն ու նուրբ մազ մ'ունին վրանին։ Ո՞վ կրնայ մարդուս այս վայրկենիս ունեցած ամէն զգացումներն ու ըրած հարցումները Թուել։ Ահա բադանման ճճի մը, զոր եթէ շատ մեծցընելով զննելու ըլլանք, ասոր բնական մեծութիւնը $^1/_{20}$ միլիմեդրէ աւելի չենք կրնար դնել։ Սոյն ճճին իւր այս փոքրկութեանը մէջ մազոտ է, եւ կրնայ ըսուիլ Թէ քանի մը հարիւր մազէ աւելի ունի։ Ո՞րչափ բարակ պիտի ըլլայ այս պիսի մազ մը։ Տարակոյս չկայ որ $^1/_{10\cdot000}$ միլիմեդրէ աւելի բարակ է։ Ահա քանի մը ձկանման ճճիներ, որոնք կայտռալով հոս հոն կը վազվզեն· մարդս կրնայ ասոնց գլուխը, աչքերը, պոչը... որոշ զանազանել։ Զարմանալի չէ, եթէ ըսուի որ մատնոց մը ջրոյ մէջ գէթ մէկ

միլիոն այսպիսի ճճի կրնայ գտնուիլ։ Եւ այս ճճիները կ'ապրին։ Եթէ մէկը քիչ մը ժամանակ մանրադիտով ատոնց շարժումները զննելէն ետքը՝ միտ դնէ երկու ապակեաց մէջ եղած միջոցին, որ այս ճճիներու բովանդակ աշխարհն է, չ'ուզեր հաւատալ ընծայել այն գործեաց, որ նոյն բացարձակապէս անըմբռնելի զարմանալիքը մարդուս աչաց առջեւ կը կը պարզեն։

Եթէ մէկն հարթապատկերով նոյն զարմանալի երեւոյթը բազմութեան ներկայացընել ուզէ, հետեւեալ եղանակաւ կրնայ յաջողիլ։ Մազէ փոքրիկ հանգոյց մ'ընելու է, որուն մէջէն հաստկեկ ասեղ մը հազիւ անցնի. սոյն հանգոյցը ջրոյ մէջ թաթխելու է։ Յայտնի է թէ հանգոյցը ջրով կը լեցուի, բայց բնականաբար՝ հանգուցին ջուրն անօսր չ'ըլլար, ուստի բարակ վրձինով մը ջուրն ըստ կարելւոյն անօսրացընելու է։ Անօսրացընելէն վերջը մազէ հանգոյցը մոգական լապտերի մէջ դնելու եւ մեծցուած պատկերը լաթին սպիտակ մասին վրայ ցոլացընելու է։ Սոյն այս երեւոյթը կը ցուցընէ՝ թէ փոքր տեղւոյ մը մէջ ինչպէս հարիւրաւոր կայտառ ճճիներ հանգիստ կը շարժին, մինչդեռ իրենց բռնած տեղւոյն բնական մեծութիւնն հազիւ չորս քառակուսի միլիմեդր է, եւ հաստութիւնը $^1/_{10}$ միլիմեդր։ Թէպէտ ասով փորձը բազմութեան առջեւ կրնայ ըլլալ, սակայն ճճիներու պատկերը շատ կենդանի եւ որոշ չ'ըլլար։

Մարդկային միտքն ապշած՝ տիեզերաց անչափ մեծութեան վրայ գաղափար մը կազմելու համար կառւան փնտռած ժամանակ՝ մի միայն ողորմելի համեմատութիւններով կը ճգնի ըմբռնել այն բանը, որ ստուգիւ իրեն անըմբռնելի է։ Բայց կարծենք թէ կաթիլ մը ջրոյ մէջ զարմանալի աշխարհի մ'այնչափ փոքրկութեան խելք հասցընել աւելի դժուար է, քան տիեզերաց հսկայ մեծութեան։ Ամենափոքրները. ստեղծագործութեան մեծութիւնն ամենէն աւելի կը յայտնեն։ Ի՞նչպէս մեծ են Աստուծոյ ձեռաց գործքերը։

(Հանդէս Ամսօրեայ)

Մաքուր բարոյականութեան եւ ճըշմարիտ կրթութեան մէկ ստոյգ եւ յարազատ նշանը՝ լեզուի եւ ոճի մաքրութիւնն է։

—

Քաղցրութիւնը սիրելի եւ ցանկալի է մեզ երբ միացեալ է զօրութեան հետ, եւ որ աւելին է, որչափ մեծ ըլլայ զօրութիւնը, նոյնչափ անոյշ եւ հրապուրիչ կըլլայ քաղցրութիւնը։

—

Մնողայ բարի օրինակը՝ տղայոց մտքին մէջ արմատ կը ձգէ ու աճելով գեղեցիկ բողբոջներ կարձակէ։

—

Ինքզինքն ուսուցիչական ձեւացնող իմաստակը կը նմանի այն հնակարկատին, որուն քով ամեն տեսակ կաշիի կտորներ կը գտնուին, բայց ամբողջ բնաւ։

—

Երաժշտութիւնը կը կազմէ տիեզերական լեզու մը որով ամեն ազգի մարդիկ կրնան միատեղ երգել, որչափ դժուարին ալ ըլլայ անոնց իրարու հետ խօսիլ։ Եւ երկու սեռք և ամեն հասակի անձինք կրնան ցուցնել անով իրենց սրտի եւ մտաց յոյզերն համաձայնաբար։

ԱՌ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՍ

ԴԱՍ Ը.

«Եւ այս իսկ է դատաստան՝ զի լոյս եկն աշխարհ՝ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս եւայլն»։

Յովհ. Գ. 19, 20։

Մեր նախընթաց դասին մէջ իրողութիւն մը յառաջ բերուեցաւ թէ անհաւատներու մէջ երբեմն առանուած են դիտական մարդիկ։ Բայց կըսեմք թէ երբէ Աստուածաշունչին ներշնչութեան խնդիրը պիտի որոշուի հեղինակութեամբ այն անձանց որք համբաւաւոր եղած են գրականութեան ամէն ճիւղերուն մէջ, Ս. Գրքին բարեկամներն ու չատագովները այնքան աւելի բազմաթիւ են իր հակառակորդներէն և թշնամիներէն որ խընդրոյն վրայ վճիռ ընելու ալ տեղի չ'մնար։ Բայց ճշմարտութեամբ զինեալ այս փառաշուք չարքը ի տես բերելէ յառաջ կարեւոր հարց մը կայ որուն պէտք է պատասխանել։ Ընդունելով թէ անհաւատութեան կողմը եղող դիտուններն բազդատմամբ սակաւաթիւ են, կրնայ հարցուիլ թէ ի՞նչ պատճառ կրնայ վերագրուիլ իրենց անհաւատութիւն. իրենց դիտութե՞ն արդիւնքն է, կամ անկէ բոլորովին տարբեր պատճառէ մը յառաջ եկած է։

Ի պատասխանի այս հարցման կըրնամք բուն այդ անհաւատներէն միոյն խոստովանութիւնը յառաջ բերել։ Սա չատ նշանաւոր անձ մ'էր ըրմէ իր բարեկամներն մեծ պարծանքով և հպարտութեամբ կը խօսէին։ Լորտ Ճոն Րոչէսթըրի պատմութիւնը չատերուն ծանօթ է։ Այս անձ իր կենացը վերջին օրերուն մէջ երբ սկսաւ պաղարեամբ մտածել և թոյլ տուաւ իր խղճմտանքին որ խօսի, փափաքելով որ կրօնքին և ճշմարտութեան դէմ իր ամբարիշտ գործերն քաւէ, չատ անգամ Աստուածաշունչին վրայ դրած կը գոչէր։ «Չար սիրտ մը, չար սիրտ մ'է մեծ առարկութիւնն այս Նուիրական Մատենին դէմ»։ և ամենամեծ զգուշութեամբ հոգ տարաւ որ իր անհաւատութեան յետս կոչումը ճանչցուի իբր պարկեշտ և խոհական գործն մեռնելու վրայ եղող մարդու մը։ Իր դարձին մէկ պատմութիւնը կայ, զոր մէջ բսած է Տր. Ճոնսըն թէ «Քննադատը պարտի զայն կարդալ անոր դերազանցութեանը համար, փիլիսոփայն անոր ճշմարտութեանց համար և աստըծը բարեպաշտութեանը համար»։

Կը հաւատամք թէ այս դարձի եղող Լորտին վկայութիւնը ճշմարիտ էր, զի Տեառն մերոյ Յովհաննու Աւետարանին մէջ ուսուցածին նման է յայտնէն, «Զի լոյս եկն յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւարն առաւել քան զլոյս՝ զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամենայն որ գործէ զչար ատեայ զլոյս և ոչ գայ առ լոյս զի մի յանդիմանեսցին գործք նորա»։ Կը հաստատէ թէ ամէն պարագայի տակ անհաւատութեան ծագումն ու յառաջադիմութիւնը յոռի սրտէ մ'է, ոչ թէ յատակ գլխէ մը, թշնամութեան է և ոչ թէ փաստէ ընդդէմ Աստուածաշունչի յայտնութեան։ Եւ երբ կերեւի անհաւատութիւն ի դիտուն, կը տեսնեմք թէ ո՛չ թէ մտքի ընդարձակութիւն և ազատութիւն ցոյց կուտայ, այլ ամենէն մեղմ լեզուն գոր-

ծածելով, կըսեմ, կը յայտնէ ճշմարտութիւնը հետազօտելու անկեղծութեան և պարկեշտութեան պակասութիւնն։ Լուրջ ամբաստանութիւն մ'է այս, պէտք չէ որ թեթեւութեամբ արտասանուի, մանաւանդ այնպիսի մարդոց դէմ որ աշխարհի մէջ գիտնականութեան բարձր անուն մը ունեցեր են։ Պէտք չէ որ փաստերն երկբայելի ապացոյցի վրայ հիմնուած ըլլան, այլ հաւաստի և յայտնի ըլլալու են ամեն անաչառ դատողի։ և այսպէս է այն փաստը զոր յառաջ կը բերեմք։ Գլխաւորաբար նոյն իսկ ամբաստանելոց խոստովանութենէն առնուած է։ «Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ» ըսաւ իր տէրը այն ծառային որ չարաչար գործածեց իր յանձնած տաղանդը. և այն պիտի ըլլայ մեր դատաստանի կանոնը մարդոց դէմ որ կը թիւրեն դեղեցիկ ու բարձր տաղանդներ Աստուածաշունչը անուանարկելու և իր աստուածային Հեղինակը անպատուելու համար։

Այս կէտին վրայ խօսելու առեն կը կարծեմք թէ ամենէն աւելի պատշաճութեամբ կրնայ յառաջ բերուիլ այն չորս անձինքը որոց արդէն ակնարկեցինք. Հիւմ, Ռուսօ, Վօլթէռ և Կիպպըն ըստ որում անհաւատական դասուն մէջ այս անձերու ունեցած ազդեցութիւնը աներկբայելի է, որովհետեւ ասոնց ոգին իրենց չէը սահմանափակուած, այլ անհաւատից ամբողջ դասակարգը կամ աղանդը նոյն ոգւով են տոգորուած։ Ինչ որ ճշմարիտ է յիշեալ անձանց համար, ճշմարիտ կրնամք համարել այլոց համար եւս որ վաղուց կը համարին անոնց հետեւողներ համարուիլ։ Վանորոյ գլխաւորաբար այս անձանց վրայ է որ պիտի խօսիմք։

Բարեբախտաբար անհաւատութեան այս պարագլուխներու յիշատակարանք գեռ կը կենան հանրութեան աչաց առջեւ և նաեւ ամենուն վերծանութեանը համար գրուած են բուն իրենցմէ կամ իրենց մտերիմ եղողներէ որք բնականաբար կրնային յաւէտ մեղմելու հակամէտ ըլլալ իրենց գրածը և չարակամութեամբ բան մը չըսել։ Արձանագրեալ են ոչ միայն նոցա կենաց գլխաւոր դէպքերն, ցուցնելով թէ որպէ՛ս զանոնք չրջապատող պարագայք կրնային իրենց համոզմանց և զգացմանց վրայ ազդեցութիւն ըրած ըլլալ՝ բայց նաեւ արձանագրուած են իրենց թղթակցութիւններն ու խօսակցութիւնները բարեկամաց հետ որոց հաղորդած են իրենց խորհուրդներն համարձակ և լիովին։ Չկայ պատմութեան տեսակ առաւել հրահանգիչ ու կարեւոր քան այսպիսի նշանաւոր մարդոց հաւատարիմ նկարագրութիւնները եթէ ըլլան անոնք ճշմարտութեան եւ արդարութեան բարեկամներ կամ թըշնամիներ։ Այն է, մինչ կը տեսնենք զանոնք իրենց անարգել վայրկենից մէջ մտերիմ բարեկամաց հետ աղատ խորհրդակցութեան մէջ, որ գործոյն գաղտնի պատճառներն երեւան կը հանուին և սիրտն այնպէս բացուած է որ կը ցուցնէ, ոչ թէ միայն ինչ որ ըրեր են անոնք՝ բայց ինչո՛ւ են ըրեր, ոչ թէ միայն ինչ բանի հաւատացեր են՝ բայց ինչո՛ւ են հաւատացեր։ Այսպէս բացայայտութենէ ինչպէս նաեւ այն եղանակէն որով Քրիստոնէութեան վրայ հրապարակային յարձակումներ

ըրած են, պիտի ապացուցանեմք թէ գիտուն մարդոց մէջ տիրող անհաւատութեան գլխաւոր պատճառներն են, ինչպէս որ ըսուեցաւ, ճշմարտութիւնը հեռագօտեղու մէջ անկեղծութեան եւ պարկեշտութեան պակասութիւնն եւ իմիսիկ ճշմարտութեան դէմ կուրացուցիչ ատելութիւն մը։

Անոնք կը պնդեն թէ, ամեն տեսակ խնդիրներու մէջ երբ դատողութիւն ընեն, հաստատ և լուսաւորեալ փիլիսոփայութեան զօրութեան ներքեւ կը գործեն։ Բայց կը տեսնենք թէ Աստուածաշունչին ճշմարտութեանը նկատմամբ իրենց հետազօտութեանց մէջ հաւատարիմ եւ պարկեշտ չեն գտնուիր պարզօրէն իբրեւ փիլիսոփայական հաստատօտութեան նիւթ մը նկատելով զայն։

Արդարութեան ինչպէս նաեւ ուղիղ արամաբանութեան էական պայմանն է սա կէտը թէ, բարձր և կարեւոր նիւթի մը վրայ գրուած գրքի մը նկատմամբ գաղափար կազմելու ձեռնարկելէ յառաջ դէթ պարտիմք մեծաւ ուշադրութեամբ ընթեռնուլ զայն։ Ի՞նչ պիտի ըսէին Հիւմ կամ Կիպպըն, օրինակի աղագաւ, երբ մէկը եւլէր ըսեր թէ իրենց պատմութիւններն միայն ստութիւններ են կամ կարգ մը սոսկալի սխալներ միայն, խոստովանելով նոյն ատեն թէ երբեք կարդացած չէր կամ առ առաւելն մասամբ իւիք կարդացած եր այդ գրքերէն։ Կամ ի՛նչ ընդունելութիւն պիտի գտնէ առարկող մը Նեւտոնի կամ Լոքքի պատուական գործերուն դէմ ըսելով որ անոնք վնասակար վարդապետութեանց կամ անհասկանալի դաղտնեաց խառն հաւաքածոյներ են, երբ մի և նոյն ատեն խոստովանի թէ երբեք զգուշութեամբ կարդացած չէ զանոնք։ Ո՞չ ապաքէն ամեն ողջամիտ մարդ պիտի արհամարհէր այս տեսակ դաղափարներն և պիտի զայրանար այն համարձակութեան համար որով այդ կարգի գործոց նկատմամբ գաղափար յայտնել կը յանդգնի առանց զանոնք հասկնալու աշխատութիւն յանձն առնելու։ Այսպիսի կարծիք մը անտարակոյս չարակամ և տարօրինակ պիտի նկատուէր, խնդրոյ առարկայ եղող նիւթերուն բարձրութեանը և կարեւորութեանը համեմատութեամբ։ Մանաւանդ երբ հեղինակներն գիտական և բարի անձանց պատուոյն և վստահութեանը արժանացած են։

Արդ, ահա Աստուածաշունչը, որ մեր առջեւ կը դնէ թէ ներկայ և թէ հանդերձեալ կենաց վերաբերեալ մեզ համար անհուն կարեւորութիւն ունեցող նիւթեր, և որ ինչպէս ամեն ոք պարտի ընդունիլ, ամեն դարու մէջ մեծ մտաց տէր լաւագոյն մարդոց շատերն կատարելապէս և ամենայն խնամով ուսումնասիրուած եւ հաւատացուած են։ Արդարութիւն և իմաստութի՞ւն է երթէ ո և է մարդ իր հաւատոյն անարժան համարէ զայնս առանց այդ կարեւոր նիւթերը պարունակող գիրքը խնամով և զգուշութեամբ վերծանելու կամ քննած ըլլալու։ Տեսնենք թէ անհաւատք որ մեր Նուիրական Մատեանին դէմ վճիռ կարձակեն, նախապէս կարդացեր և քննե՞ր են զայն։ Թողումք որ ինքեանք պատասխանեն այս հարցման։

Հիւմ խոստովանած է թէ, բնաւ

կարդացած չէ Աստուածաշունչը չափահաս ըլլալէն յետոյ, այս իրողութիւնն ընդհանուր էր իր ժամանակակից մէջ։ Հիւմ Տիւրհամի աբբայարանին մէջ նշանաւոր եկեղեցականի մը անգամ մը խոստովանեցաւ թէ երբեք մտախոհութեամբ չէ կարդացած մինչեւ իսկ Նոր Կտակարանը։

Կիպլըն մեզ կը ծանօթացնէ թէ երբ կուզէր վերջնական որոշման մը գալ Ս. Գրոց ճշմարտութեան նկատմամբ, բոլոր իր ուշադրութեամբ կարգացածներն էին Յովհաննու Աւետարանը և Ղուկասու Աւետարանին մէկ գլուխը։ Յիսուսի սիրելի աշակերտին գրութեանց մէջ արտայայտած այն աստուածային օծութիւնը այնչափ գայթակղակա՞ն եղաւ Կիպլընի մտայնման մարքի մը որ ալ չէր կրնար կարգալ Ս. Գրքին ուրիշ մասերն ալ։ Կամ թէ որոշ նպատակ ունեցած էր արհամարհել Ս. Գիրքը չատ հարուստ ուշադրութիւն մը նուիրելով անոր պարունակութեանց՝ մինչ ուշի ուշով կուսանէր ուրիշ գրքերն և խըներամով կը կշռէր անոնց արժանիքը։

Հալլէյ անուն աստղաբաշխին խորապէս ազդուած էր անհատութեամբ։ Անգամ մը խոստովանեցաւ ղիւր Ակեպաիկեանութիւն Սըր Իսահակ Նեւտոնի առջեւ, երբ այն պատկառելի անձը գարձաւ անոր և ըսաւ, «Պարո՛ն, դուն երբե՛ք ուսումնասիրած չես այս խնդիրն, բայց ես ուսումնասիրած եմ։ Մի անպատուեր զքեզ երբեւ միւսիսիպի գետեզրը նստելով այնպիսի խնդիրներու վրայ զոր քննած չես երբե՛ք»։ Հալլէյ պարտաւորեցաւ ընդունելու թէ արժանի էր այն յանդիմանութեան։

Ուրիշ օրինակ մ'ալ մեզ պիտի բերեմ որ Տ.ք. Բենիամին Ֆրանքլինի կեանքի մէջ պատահած վաւերական դէպք մը առնուած է։ Կը պատմուի թէ երբ Ֆրանքլին կը բնակէր ի Փարիզ, հրաւիրուեցաւ ակումբի մը յորում կը գտնուէին չատ պալատականք և իրենց Սկեպտիկեանութեամբ եւ գիտութեամբ նշանաւոր հանդիսացող մարդիկ։ Ըստ սովորութեան, ազատ խօսակցութեան մը մէջ, Բրիտանիէութիւնն էր իրենց նիւթը, և Աստուածաշունչին վրայ կը բարգէին ամեն նախատինք։ Իրենց խօսակցութեան մէջ աւելի տաքնալով ներկայ եղողներէն մէկը ամենուն ուշադրութիւն հրաւիրեց, մեծաւ վստահութեամբ մը ըսելով թէ, Աստուածաշունչը ոչ միայն այլանդակ խաբէութեանց կոյտ մ'է, այլ և բոլորովին զուրկ գրական արժանիքէ։ Ֆրանքլինէն զատ ամենքն ալ կատարեալ համամտութիւն յայտնեցին այս խօսքին։ Ֆրանքլին իր ժամանակին մէջ ամենէն մեծատաղանդ անձ մը ըլլալով ուզեցին այս մասին իր գաղափարն ալ իմանալ։ Յայնժամ Ֆրանքլին իրեն յատուկ եղած կերպով մը ըսաւ թէ պատրաստ չէր յարմար պատասխան մը տալ իրենց, որովհետեւ ճիշդ այս միջոցին իր միտքը գրաւուած էր չատ գերազանց գրքի մը գեղեցկութեամբն, զոր Փարիզի գրատուներէն միոյն մէջ գտնելու բարեբախտութիւնն ունեցած էր։ Եւ որովհետեւ Աստուածաշունչին գրական արժանեաց վրայ խօսքեր էին, թերեւս հաճելի ըլլար իրենց բազդատել այն իր նոր գրքին գրական արժանիքը այն հին գրքին արժանեաց հետ զոր կը քննադատէին։ Եթէ հաճէին

մաս մը պիտի կարդար իրենց։ Ամենքը փափաք յայտնեցին որ լսեն։ Ապա բացաւ իր գիրքը և վանմ արատասանութեամբ մը կարդայ հետեւեալ խօսքերն։

« Աստուած ի թեմանայ հկեսցէ, և Սուրբն ի Հովանաւոր և յանտառախիտ լեռնէ։ Ծածկեսցին զերկինս փառք նորա, օրհնութեամբ նորա լի եղեւ երկիր։ Ճառագայթք նորա իբրեւ ըզլոյս եղիցի։ և եղջիւրք ի ձեռին նորա։ Եւ ակայ՝ և չարժեցաւ երկիր, հայեցաւ՝ և հալեցան ազգք, լերինք խորտակեցան բռնութեամբ, և բլուրք յաւիտենականք հալեցան։ զգնացս Նորա յաւիտենականս »։

Հիացեալ ունկնդիրք արդարեւ գեղազանց է գոչեցին իրենց լսածը ու ըսին, ցայն վայր իրենց բոլոր կարդացածէն և լսածներէն ոչ մին կրնայ գերազանցել նորա վսեմութիւնն և բարձրութիւնն։ Եւ ուղեցին գիանալ այս նոր գրքին և անոր հեղինակին անունը։ «Անչուչա Պարոնայք» ըսաւ Ֆրանքլին ժպտելով իր յաղթանակին վրայ, « Գիրքս լի է այսպիսի հատուածներով, ուրիշ Գիրք չէ այն բայց եթէ ձեր անպիտան սեպած և նախատած Աստուածաշունչը։ Կարդացի ձեզ Ամբակում Մարգարէին աղօթքէն հակիրճ հատուած մը »։ (*)

Այսպիսի մարդիկ են ահա անոնք՝ որ Աստուածաշունչին ճշմարտութեանը դէմ վճիռ արձակել կը յանդգնին։ մարդիկ որ երբեք քննած չեն զայն որպէս արժան էր քննել գիանալու համար նորա պարունակութիւնն, և սակայն կըսեն թէ մերժած են զայն իբրեւ հետեւանք փիլիսոփայական հետազօտութեանց։

Աւելորդ ուրիշ ապացոյց մը հաստատելու թէ անհատապաք այս խընդրոյն մէջ արդարութեամբ չեն վարուիր։ Իրխատնէութեան թեր կամ դէմ ինչ ալ որ ըսուի, տարակոյս չկայ թէ լուրջ նկատողութեան արժան է այն։ կը խօսի այնպիսի նիւթերու վրայ որ ահեղ կարեւորութիւն ունին որոյամեն բանաւոր մարդ պէտք է մատչի ծանր և ակնածական ոգւով։ Նա կուսուցանէ մեզ մարդոյ անկումը անմեղութեան վիճակէ մեղայ և վըշտայ վիճակի մը մէջ։ Ցոյց կուտայ Աստուծոյ դիտառատ սէրը մարդոց փրկութեան մէջ։ և կը պատմէ թէ թէպէտ ինքը է «Բարձրը ու Բարձեալը որ յաւիտենականութեան մէջ կը բնակի», բայց «այնպէս սիրեց զաշխարհ մինչեւ իր միածին Որդին տուաւ որ ամէն ով որ անոր հաւատայ չ'կորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։» (*)Կատակի՞ նիւթ է այս։ Ծարմար և պատշա՞ճ է զայն քննել հեգնութեամբ և ծաղրով, ողջամիտ փիլիսոփայութեան կը յարմարի՞ այսպիսի նիւթի մը հետ թեթեւութեամբ վարուիլ։ Եւ սակայն ոչ ոք կրնայ ժխտել ասոնք զորս ընդհանրապէս իբրև ղեկնք կը տեսնեմք ծանօթ անհատներու ձեռագրէ։ Միայն մերթ ընդ մերթ է որ տուիթ կունենամք անոնց դէմ ելլելու տրամաբանական ձեռնարկութեան կամ ծանրագլուխ վիճաբանութեան դաշտին վրայ, և երբ իրենց փաստերն մի առ մի ձեռք առնուելով, կը ցուցուի անոնց տկարութիւնն ու անարժէքութիւնը, փոխան ազնիւ ոգւոյ մը անկեղծութեամբն տեղի տալու, տակատին կը պնդեն թէ ան-

(*) Ամբակում. Գ. 3—6

(*) Ցովհ. Գ. 16։

պարտելի են, որովհետեւ կարող են հեգնութիւն մը կամ անարդական ծաղրածութիւն մը արտայայտել։ Երբեմն այսչափով ալ չ'բաւականանալով գռեհիկ խեղկատակութեանց մինչեւ ատորին խաւերը կիջնեն։ Վոլթեռ, երբ Աստուծոյ միածին Որդւոյն, աչխարհի Փրկչին վրայ խօսէր իր սովորական բացագանչութիւնն էր «Նուաճեցէ'ք թշուառը.» և այս հայհոյութիւնը այնքան կը կրկնէր որ իր սովորական բառերէն մին եղած էր։ Իր հետեւողներն ևս այս ատորին վարմամբ առգորուած էին և որք իր ազդին մէջ բարձր դիրքեր ունենալով իրենց առաջնորդէն աւելի յառաջ անցան։

(Շարունակելի)

ԻՄԱՍՏԱԼԻՑ ԲԱՆՔ

— *Ճշմարիտ բարեկամը անկեղծ սիրտն է։*

— *Խոստանալ և չկատարելն մեծագոյն անմտութիւն է։ Լաւ է չխոստանալ իսկզբան քան թէ խոստանալ և չկատարել ի վերջոյ։*

— *Անհատի մը իրական արժանիքը իւր բարոյական նկարագրին մէջ կը կայանայ։*

— *Հաւատարմութիւնը՝ յաջողութեան էական պայմաններուն առաջինն է. իսկ գաղտնապահութիւնն ու ճշմարտախօսութիւնը առաքինութեանց գերագոյնն։*

— *Առանց գործնական ապացուցման՝ պերճախօս քարոզչի մը գեղահիւս քարոզն՝ ապառաժի վրայ ցանուած սերմերու կը նմանի։*

— *Անսկզբունք անձը կը նմանի տեբևի մը՝ որ մեղմ զեփիւռէն իսկ աստ անդ կը տարուբերի ալէտատան։*

— *Սիրել ճշմարիտը, սիրել է զԱստուած։ Մ'շակել ճշմարիտը, մշակել է բարին ու վսեմը։*

— *Հիւղակի մէջ բնակող հասկաստ գիւղացին՝ շքեղ ապարանքի մէջ ապրող մեծախօս քաղաքացիէն ու անօգուտ ազնուականէն յոյժ գերազանց է։*

— *Դրսուանց սուրբ ներսուանց սատանայ քրիստոնեայն ծեփած պատի մը կը նմանի։*

— *Երբ անգամ մը կը տիրանաս բարւոյն մի դիտեր զչարն, այլ լեր ուղիղ ի բարին. բայց երբ կը կարծես Թէ բարւոյնած ես չարէն, ջանա շուտ անձդ ազատել անկէ։*

— *Լաւ է առաջինն ըլլալ վար գործոց մէջ՝ քան Թէ յետադէմ բարի ջանից մէջ։*

— *Լաւ է կոյր աչօք տեսնէ ոք իւր անձը քան սրատես աչօք դիտէ զուրիշը։*

— *Զրպարտիչ լեզուն մահառիթ Թոյն է, իսկ ճշմարիտն՝ բալասան մահացու վերքին։*

— *Անկեղծ բարեկամը փշոց մէջ փայլող գեղեցիկ շուշանի մը կը նմանի։*

— *Ամենէն ազդեցիկ քարոզիչն մարդուն իրական կեանքն է։*

— *Որպէս ջուրի կաթիլները միանալով համատարած ովկիանոսներ կը կազմեն, հմանապէս չնչին մեղքեր հեզհեզտէ մուտք գտնելով մարդուն սրտին մէջ, կ'ընեն զայն միջոց անյատակ մահատուեր քաոս մը։*

— *Սէր ունիս հոգւոյդ մէջ. խանդավառէ, նուիրագործէ ոչ Թէ ի չարն, այլ ի բարին։*

— *Սէրը հոգւոյն ճրագն է, իսկ աստեղութիւնը՝ նորա մարը։*

Նիկոմիդիա ՀՐԱՆԴ - ՃԱՆԻԿ

ՄԱՐԴՈՒՆ ԿՈՉՈՒՄԸ

Մարդ ընկերային ծնած է բնապէս և հարկաւորապէս։

Նա ունի ինչ ինչ կարեւոր պէտքեր, զորս ինքն անձամբ չկրնար հայթայթել, միշտ կը կարօտի իւր ընկերոջ, անոր օգնութիւնն կը խնդրէ և առանց այս օժանդակութեան կամ ձեռնտուութեան չէ ատակ նմա վայրկեան մ'իսկ գործել և ապրիլ։

Այս փոխադարձ՝ հարկաւոր օժանդակութիւնն սահման զամէն ոք միմեանց հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ զանոնք իբր օղակներ, ահագին շղթայ մը կը կազմէ, որ կը կոչուի մարդկութիւն։

Մարդկային պէտքերն որոշ սահման մը չունին, մարդ և իւր միջավայր որքան յառաջադիմեն այնքան կը բազմապատկին մարդկային պէտքերն։

Արդ՝ ինչ պարտի ընել մէն մի անհատ, որպէս զի այս համատարած միութեան լաւագոյն անդամն լինի։

Այս միութիւն ուրիշ բան չէ, բայց եթէ՝ ամբողջութիւն մը համասեռ մարդկանց, որք համախմբուած են և կապուած ընդ իրեարս փոխադարձ շահերով։ Այս փոխադարձ շահեր կը կազմեն պարտք և պահանջք։

Մարդ, այո, պէտքեր ունի, այլոց ձեռնտուութիւնն կը խնդրէ· բայց ունի նաեւ պարտքեր։ Համերաշխութեան օրէնքն կը ճանչնամք· եթէ այլք իւր անձին համար այնքան կ'աշխատին, այնքան յոգնութիւն ու նեղութիւն յանձն կ'առնուն և այն կերպով պարտի ինքն եւս համապատասխանել նոցա ջանից և աշխատութեան։

Մարդն ընկերային է իբրև, հետեւաբար ունի իւր քաղաքացիական պարտաւորութիւններն, զորս պարտի կատարել անվերի։ Պարտի նպաստել մարդկային մեծազանգուած ընկերութեան բարոյական մտաւորական և ֆիզիքական յառաջադիմութեան ու բարգաւաճման։

Այն քաղաքացին որ կ'ապրի, բայց չը կատարեր իւր պարտաւորութիւններն, որ առ երկիրն, առ պետութիւն և առ իւր անկատ նմանիս, այսպիսին չէ արժան օգտակար և լաւագոյն անդամն համարել մարդկային ազգի։ Այն որ ո և է աշխատութեան տուրք կը մերժէ, նոյն իսկ ամենափոքր մաս մի, գող մ'է պարզապէս, գող մը, սակայն, որ յոյժ վնասակար է մարդկային յառաջադիմութեան։ Նա բնականաբար կը յետադիմէ։ յորմէ կ'արտադրի Աշուտութիւն եւեթ։ և բաց աստի կը վնասէ Թէ իւր անձին և Թէ իւր նմանեաց և յայնժամ յառաջադիմութիւնն երեւակայական գաղափար մը միայն է։

Ապրիլ չնշանակեր անգործութիւն, այլ կիրառութիւն մտաւորական և բարոյական կարողութեանց։

Քաղաքացի մը պատասխանատու է ոչ միայն իւր անձին և խղճին, այլ և երկրին և ընկերութեան։ Պարտի ուրեմն իւր ամէն կարողութիւններն կիրառութեան ենթարկել ի շահ իւր և մարդկային ընդհանուր յառաջադիմութեան։

Ամէն ոք, երբ քաղաքացիութեան ասպարէզն կը Թեւակոխէ և կը կանգնի նորա սահմոց վերայ, պարտի պատասխանել ժամանակի և պէտքի պահանջման, պարտի շարժիլ դէպ յառաջադիմութիւն, զի կը շարժի նաեւ բնութիւնն, որ է օրինակ մեր գործառնութեանց։

*Վա՛յ և հազար վա՛յ այն քաղաքացւոյն, այն բանաւոր էակին, որ Թեւերն

կութքին վրայ կապած կը հայի անգործ։

Ծուլութիւնն ու անգործութիւնը ժամանակի գողութիւն մի է։

Մարդն իւր իսէալին յաղնժամ կը ժամանէ, երբ կը ճանչնայ իւր կոչումն և ունի մարդկային կենաց արժանավայել ծրագիրն։

Ի՞նչ է մարդուն կոչումն։ — Իւր Հաստչին բարերար կամաց հպատակիլ արդեամբ, աշխատիլ, ուսանիլ և կարեւոր հմտութիւններ ձեռք բերել, որպէս զի օգտակար լինի իւր նմանեաց ՕՔ նիւթապէս և ՕՔ բարոյապէս։

Ո՛հ, ինչ մե՛ծ կոչումն։

Մեր կոչման ներքեւ պիտի առնումք ինչ որ Աբարիչն ստեղծած է և զետեղած բնութեան մէջ։ Եւ մանաւանդ որպիսի մեծ ծառայութիւն պիտի մատուցանեմք ընկերական աշխարհին, եթէ մեր կոչման համապատասխանեմք, — պիտի զարգանայ այսու գիտութիւնն ու գեղարուեստն։

Նախնական ժամանակաց մէջ բնութիւնն սանձարձակ կը գործեր ամէն ինչ, այլ այժմ կրնայ գործել· երբեք· գիտութեան միջոցաւ խուզարկուք այնպիսի միջոցներ գտած են, որ ամենահզօրն իսկ կը նուաճեն։

Յաւուրս նախահարց, ինչպէս գիտենք, կը պակսէին ամէն գիտական, արուեստական եւայլն գործիներ, այլ այժմ ի շնորհս նորագոյն ճեռագործութեանց այս ամենքն կը վայելեմք։ Էր երբեմն, յորժամ մարդն շանթին գերին էր, իսկ ի նորումս նորա դէմ այնպիսի գործի մը գտած է որ զինքն ու իրեններն կ'ազատէ նորա ներգործութենէն։ Ֆրանկլին յօրինեց շանթարգելի ղրութիւնն, որով կարող եմք տիրել բնութեան մի ահագին զօրութեան։

Երջանիկ կ'ըզամ զանձն իմ, ի ծննդավայրիս, որ ներկայ լուսաւորեալ դարուն մէջ ստեղծած է գիս Աստուած, յոր կը վայելեմք իւր բարիքներն ու կ'օգտիմք ի շնորհ նաեւ մեր Օգոստափառ Վեհապետին, որոյ կրթասիրութիւնն ու ուսումնասիրութիւնն անուրանալի են մեզ։

Բայց այս ըսել բաւական չէ, պէտք է մեք եւս ժամանակին յարմարինք, պարտիմք յառաջադիմել դէպ յայն, որ կը պահանջէ նա ի մէնջ, այսինքն՝ դէպ ի գեղեցիկն, օգտակարն, վսեմն և ի կատար անդ գիտութեան։

Ջարմանալ Ֆրանկլինի հնարագիտութեան վրայ, զարմանալ Ճորճ-Ստէֆնսընի վերայ, ո՛չ ինչ կ'արտադրէ, զարմանալ վերջապէս այլոց քրտանց վերայ, օգուտ մը չ'ընձեռեր, պէտք է մեք եւս նկրտինք դէպ յայն գագաթնակէտն կատարելութեան։

Հնարել մերեւս գերմարդկային Ոուի, այլ ո՛չ, մարդն եւս կարէ հնարիչ լինել։ Աբարիչն մեր գլխուն մէջ ղրած է բանն և բազկին մէջ ոյժն ու այդու զմեզ առակ ըրած է ամէն տեսակ կատարելութեանց։

Կը խոստովանիմ արդարեւ ՕՔ՝ ծանր է մարդուն կոչումն, այլ միանգամայն դիւրին, — ծանր, որովհետեւ մեծ ջանից և նիւթական օժանդակութեան կը կարօտի։ Դիւրին, որովհետեւ երբ միջոց կայ՝ կամք, մի հաստատուն կամք բաւական իսկ է լիուլի կատարման։

Ինչ վիճակի մէջ կը տեսնեմք, ասկայն, զմարդ ընդհանրապէս։

Ի՛նչ ինչ նախապաշարմանց գերի, կը գործէ ինչ որ չուզեր և կը դառնացունէ այն կեանքն, որ պարտ էր երջանկութեամբ լեցուն լինել։

Սա այնպիսի սխալ մի է, որ կը հար-

կաղրէ զմարդն մնալ միշտ ի նոյն վիճակի։ Իրաց այս պարագային մէջ մարդ կը յետադիմէ կամ յետադէմ կը համարուի, երբ այլք կը յառաջադիմեն, մինչ ինքն կ'ըսպասէ։

Այս վիճակ կրնայ խոստանալ երջանիկ ապագայ մը։

— Երբեք, յետադիմութիւն և երջանկութիւն ձեռնհակ են իրարու։

ՎԱՀԱՆ-ՆԵՐՍԷՍ Գ. ՍԱՐՃԵԱՆ

Ի Կամառակապ-Ակնայ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Մարդկային հանճարը հրաշալի արտադրութեանց մղող, մարդ էակին սիրտը ոգեւորող, գիտութեանց զանճարանին ոսկի դռները բացող, անհատները ու ազգերը զարգացնող, նկարագիրը բարձրացնող և ազնուացնող զօրութիւն մը կայ, և՛այդ զօրութիւնը՝ զոր գեղեցկակերտ տիեզերքի Արարիչը դրած է ի մարդ, գեղեցկին սէրն է՝ որ ծնունդ տուած է գեղարուեստից, երաժշտութեան, նկարչութեան, ճարտարապետութեան և բանաստեղծութեան։

Քննենք մի անգամ տիեզերաց զարմանակերտ յօրինուածն։ Արդարեւ ափ ի բերան պիտի մնանք տեսնելով որ բնութիւն համօրէն իւր լրութեամբ գեղարուեստից կատարելագործումն է։ Մինչ կը գեղազարդին դաշտը և բլուրը կանաչազեայ ծաղիկներով, բարձրաբերձ ու տերեւախիտ ծառերով, մինչ վճիտ առուակն կը սուրայ հովտին մէջէն կարկաչահաս ու օձապտոյտ, մինչ երկնից փառայեղ գմբեթն կը զարդարուի անհամար լուսատու ջահերով, մինչ քնութեան երգիչն կը գեղգեղէ մեղանոյշ, մինչ լերինք բարձունք յամպս կը ծրարեն գիւբեանց խրոխտ գագաթունս, մինչ ամպեր դէզ առ դէզ կը բարձրանան անդ ի վեր յերկնակամար, մինչ ցօղ գիշերայնոյ կիջնէ հեզիկ հեզիկ ի վերայ մարգաց և դալարեաց և վերջապէս մինչ վարդ ու մանուշակ կը բացուին բոսորագեղ և տուընջեան վեհապետն կողողէ զերկիր իւր նշուլագեղ շողիկներով ամենեքին միահաղոյն կը ներկայեն ի տես համայնից հիասքանչ գեղարուեստից մէյմէկ տիպարներ ճշգրիտ կատարելագործութեամբ։ Եւ անդ երկնից բարձունքէն վեր անհունութեան մէջ բնակող յաւերժական Էակն, նոյն ինքն է ամենամեծ գեղարուեստաւորն՝ որ իւր փառապանծ գահն հաստատած է յերկինս ի վեր։

Գեղարուեստից ազդեցութիւնն հզօր է մարդուն սրտին վրայ և նոցա օգտակարութիւններ բազմաթիւ։ Գեղարուեստք կը ծառայեն իբրեւ անմեղ աղբիւրք հաճոյից։ Երաժշտութիւն՝ գեղարուեստից առաջինն, որպիսի՛ հզօր ներգործութիւն մը ունի մարդկային հոգւոյն վրայ, որպիսի՛ երջանկարար զուարճութեանց և բերկրանաց աղբիւր կը լինի։ Արդեօք քանի՛ քանի սրտերէ մէգն ու մառախուղը փարատած է։ Ով չյուզուիր ի լուր նուագի հեշտասուր ձայնին, մանուկն կը կայտռէ զուարճագին, երիտասարդն կը տոգորուի գերմարդկային զօրութեամբ մը, կերգէ և կը գործէ ի սիրտ հոգենորոգ, ալէգարդ ծերունին նոր կեանք մը կը զգենու, յուսահատն յոյս եւ սիրտանք կը գտնէ։ Առաւել հզօր միջոցք են գեղարուեստք երկրի մը զարգացման։ Թող մարի մի անգամ գեղեցկին սիրոյն կայծը անհատին սրտին մէջէն, և ահա հոգւոյն ճգնաժամը կը հասնի, կը նեմանայ նորա վսեմ ճակատն,

և կիյնայ անկենդան դիակի մը նման։ Ծիրաւի տիեզերք համօրէն գեղարուեստիւք կը ժպտի, անոնցմով կը փողփողի, անոնցմով կը շարժի, անբան անաստուներէն մինչեւ բանական էակ, գեղեցկին սիրով եւեթ կը գործեն ու կապրին։

Մարդկային խորհրդոց ալէծուփ ովկիանն, վշտացեալ հոգւոյն խռովայոյզ զգացումն, ի լուր սոխակի հեշտալուր ձայնին, ի տես քանդակի մը հսկայ շէնքի և կամ բանաստեղծի մը հոգեշունչ տողերուն հանդէպ կը հանդարտի և կը գտնէ իւր սփոփ։ Կունկնդրես երաժիշտը, կը յուզուի հոգիդ, կզգաս Ծէ տողին էակ մը չես դու, կը դիտես քանդակ մը, Փիտիասի մի ձեռակերտն, յոյզ մը, խինդ մը կզգաս հոգւոյդ մէջ, և կը գոչես որպիսի՛ խորհուրդ վսեմ և որպիսի՛ ճարտար ձեռներ։ Եւ ի վեր քան զամենայն կը դիտես զբնութիւն ողջոյն, կը խորհիս քանի՛ իմաստուն, քանի՛ ճարտար է Արարիչն տիեզերաց։ Եւ այդ հոգեյոյզ տեսարաններէն դիւծեալ խռովայոյզ միտքդ, նուաղեալ հոգիդ կը հանդարտի և կը լեցուիս երկնային վեհ ու վսեմ խորհուրդներով, զգացումներով, և երեւակայութեան հրափետուր Ծեւեր առնելով վեր դէպ ի վեր կը սաւառնիս և նետուելով բնութեան հեշտաւէտ բազկաց մէջ կը գոչես յառա՛ջ, յառա՛ջ, օ՛ն յառաջ, աւելի յառա՛ջ։

Ապրիմք ուրեմն իբրեւ լուսաւորեալ գարու մը և լուսաւորեալ երկրի մը մէջ եղող լուսաւորեալ ազգ· սիրեմք գեղեցիկն, վառումիմք սորա սիրովն, զի սիրել զգեղեցիկն սիրել է զԱստուած։

Նիկոմիդիա ԱՆԴՐԱՆԻԿ ԻՓԷՔՃԵԱՆ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխարհագրութիւնը երկրիս՝ իսկ տեղագրութիւնը՝ որպէս յայտ իսկ է բառական իմաստէն, առանձին տեղւոյ մը մակերեւոյթին, անոր բնակիչներուն և բերքերուն նկարագիրն է։ Ինչպէս որ քաջ աշխարհագիրն իւր հեղինակելի աշխարհագրութեան անՁերի կատարելութեանն համար ուրիշ բազում նմանօրինակ հեղինակութիւններ կը ԾղՁատէ անձանձիր և երբեմն իսկ տեղւոյ մը նկատմամբ իւր մտաց մէջ տիրող տարակոյսն փարատելու համար անձամբ անձին կ'երթնէ ինքնին և է՝ զի օրերով ու ամիսներով կը ճամբորդէ վաստակաբեկ մեծ գիտս մ'ընելու հաստատամտութեամբ, նմանապէս և ճշմարիտ տեղագիրն գիւր տեղագրութիւն կատարեալ ընելու համար՝ երկար ժամանակ ճակատն ի քիրս կը ճգնի ու կը տքնի տեղւոյն հինն ու նորն, անցեալն ու ներկայն ճշդիւ և ուղղութեամբ դասաւորելու և նկարագրելու համար։

Տեղագրութիւնը աշխարհագրութենէն սովաւ կը տարբերի՝ զի մինչ առաջինն տեղւոյն պատմական և աշխարհագրական ծանօթութիւններն ու սահմաններն կը տառերագծէ՝ իսկ վերջինն՝ անտես առնելով այդ մանրամասնութիւնները՝ իրաց և դիպաց հատարակ մակարդակէն վեր եղող ուշագրաւ և ակնահար իրերն ու երեւոյթներն եւեթ կ'որդեգրէ ի ներկայացումն։ Հետեւաբար, երբ ոմն կ'ուսումնասիրէ տեղւոյ մը տեղագրութիւնը՝ ուսումնասիրած կը լինի տեղւոյն անցեալն ու ներկայն, պատմութիւնն ու աշխարհագրութիւնն միանգամայն։ Ինչպէս որ աշխարհագիրն կը զգուշանայ սխալ մը գործելէ և կամ սպրդեցնելէ՝ նմա-

նապէս և տեղագիրք պարտին զգոյշ լինել, զի ըստ քմահաճոյից, իւրեանց տեղանկարագրութեանց մէջ մեծն ու փոքրն, չիքն ու գոյն, առարկայականն ու երեւակայականն չշփոթեն և փոխադարձ իմն չգործածեն ի մեծ զարմացումն տեղացի հասարակ և պարզամիտ ժողովրդեան որ միայն հեգնօրէն կը ժպտի անկարող գոլով հրապարակաւ դիտողութիւն ընելու և ուղղելու գործուած սխալն բացարձակ։ Այսօրինակ սխալներ խոհուն և գիտական մտքեր չեն ներեր, վասնզի ներկայ վայրկեանը և ժամանակի այն տեւողութիւնը զոր *այժմ* և *այսօր* կը կոչեմք՝ վաղը *անցեալ* և *երէկ* պիտի ըսեմք։ և ինչ որ այսօր աշխարհագրական է վաղը կրնայ երկրաբանական ըլլալ։ Ներկային մէջ գիւղ մ'աննշան ի հոլովս ժամանակաց կ'ըլլայ քաղաք, և քաղաք մը կամ կ'աւերի խառնաշեղջ գերդ Մալաթիա, կամ կը փոխուի մի աննշան գեղջ որպէս Տիւրոս և Սիդոն և կամ բոլորովին կ'անհետանայ բնաջինջ որպէս Պոմպէ, Բաբելոն և Հերքիւլանում Այր, ինչ որ ներկային մէջ լեռ է կամ բլուր ապագային պիտի փոխուի դաշտի, դաշտ՝ ծովու, գետ՝ առուի և փոխադարձաբար։ Իրաց այս բնական բաժանմանց շարունակական փոփոխականութիւնք մեր ներկայ կենաց երջանիկ և փառաւոր դիրքն եւս զոր հաստահիմն և անվախճան ըլլալ կը կարծենք՝ յեղյեղուկ և ժամանակաւոր ըլլալու գաղափարն կ'ընծայեն մեզ։

Սակայն առանց մեր նիւթէն շեղելու՝ սա պարտիմք յարաժամ ի մտի ունենալ զի տեղագրական ուղղակի և անուղղակի ամենափոքր հատուած մ'իսկ տեղն ըլլայ նիշաւոր և ըլլայ աննիշ՝ ապագային տեղւոյն պատմութեան աղբիւրն պիտի լինի գերդ քերթածս Հոմերի և այլ հին բանաստեղծից։ ուստի տեղագիրն պարտի լինել ուղիղ և որոշ։ վասնզի հրապարակ եղած նկարագրութիւն մը երբ աշխարհագրական է կամ պատմական և կամ փիլիսոփայական, երբ Միւր՝ և մըտաց ընդհանուր օրինաց հակառակ՝ իւր ուղղութեան հարուածն նախապէս կամ խմբագրէն կ'ընդունի և կամ յետոյ այլոց քննադատական բովքէն կ'անցնի։ սակայն տեղագրին որդեգրած առարկայն այլոց աչերէն ծածկեալ ըլլալով՝ կրնայ մրուկն ուղտ լինել՝ որպէս կ'ըսուի հասարակօրէն։ Բայց լրջախոհութիւն չէ, այլ տեսակ մը մեղանչումն հանդիպ եղմարտին որ սակայն կը բողոքէ անճայն, պարզապէս ինքնասիրութիւն մը, խելացնորութիւն մը՝ երեւակայական Միւոց Ծռիչ տալով տեղւոյ մ'իրական և բնական տեսարաններն աւելի ճոխազան և հանելի գոյներով ներկայացնելու համար, էական, այլ աւելորդ ստապատում յաւելումներ ընել կամ պակսեցնել։

Սակայն այն կէտին ուր տեղագիրն կը սկսի շփոթել իրականն ու երեւակայականն տեղագրութիւնն եւս կը դադրի տեղւոյն ճշմարիտ նկարագիրն և պատմութեան հարազատ աղբիւրն ըլլալէ։ զի տեղագիրն այդ պահուն աւելի կը ստեղծէ քան արդէն գոյ եղածը կը պատկերէ։ Նմանօրինակ դիտողութեան արժանի տեղագրութիւններ, քանիցս տեսնուած են լրագրաց մէջ որ ոմանք տեղագիրք նոյն ստեղծումներն ըրած են։ զինքեանս յաւէտ երեւակայական քան Թէ իրական կեանքի աշխարհի մը մէջ կարծելով։ Մին իւր գիւղի տեղագրութեան մէջ՝ գիւղին հիւսիսակողմէն հոսող գետ մը կը դնէր, ուրիշ մ'ալ բանաստեղծական նկարագրութեան մը մէջ հանրածանօթ

գիւղաքաղաքի մ'արեւելակողմին նոյնպէս կը դնէր գետակ մը վազուն... : Այդ երկու վայրերն ալ ծանօթ են ինձ. և մի՛ զարմանաք երբ ըսեմ Թէ այդ վայրից շուրջը գետ բնաւ գոյութիւն չունի. ինչ որ գետ դրած են և կըսեն պարտիմք հասկնալ կարկաչահոս առուակներ սոսկ :

Սակայն չգիտեմ Թէ խոխոջաւոր առուի փոխանակ սրընթաց գետ դնելով ինչ հաճոյք կը զգան, մանաւանդ զի տեղեաց աշխարհագրական պրուիւններն ալ չեն ներեր : Արդեօք բանաստեղծ ոգւոյն համար գետոյն և առուակին միջեւ ինչ տարբերութիւն կայ : Եւ միԹէ առուակն իւր ներդաշնակաւոր այլ խորհրդաւոր դղչմամբ աւելի խորին խոկ չպատճառեր : Միթէ նուազ կը յուզէ և կը ԹրԹռացնէ զգայուն և բանաստեղծ ոգւոյն քնարին Թելերն ԹրԹռուն : Ո՞չ ապաքէն. հոն, առուակին վրայ, կը Թեւապարէ արտոյտն, և վերջապէս հոն, սոխակն, երգիչն բնութեան, գարնան մէջ առուակն հովանաւորող իւր սիրատարափ վարդից ծոցոյն մէջ զիւր սիրերգն յուզիչ կը միացնէ կարկաչահոս առուակին գլորող արծաԹափայլ ալիքներուն հետ : Սակայն, զիարդ և իցէ, խոհականութիւնը կը պահանջէ՝ զի գետը գետ՝ և առուակն ալ առուակ նշանակենք, հոգ չէ Թէ ոմն լոկ անուանական բառերով շատանայ, իսկ այլ ոմն բանաստեղծօրէն պատկերացնէ զայնս, միայն Թէ էական կէտեր պէտք չէ կերպարանափոխուին մեր զրչաց ներքեւ : Ուրեմն, յայսմհետէ ջանամք մշակել ի մեզ ՃՇՄԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ոգի, գաճաճն՝ գաճաճ և հսկային՝ հսկայ ներկայեցով :

Գուրտպէէնն Ս. Ց. ԳԷՋԸԼԵԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

Ջեֆիւռը անցաւ Քնարին վրայէն և մեղմ երաժշտութիւն մը յառաջ բերաւ :

«Ի՛նչ հիանալի ներդաշնակութիւն մը կայ յիս» ըսաւ Ջեֆիւռը :

Անցաւ ծառոց տերեւներուն մէջէն և հառաչանքներ և մրմունջներ յառաջ բերաւ :

«Ի՛նչ համակրութիւն, բարեկամական ինչ գորով մը կայ յիս» ըսաւ դարձեալ :

Նա անցաւ լերանց վրայէն, տակաւ առ տակաւ սաստկացուն քամիի մը փոխուեցաւ եւ իւր ահեղ գոչիւններով լեցուց լեռներն ու ձորերն :

«Ի՛նչ» վսեմութիւն գոյութիւն ունի յիս» աղաղակեց :

«Այդ երաժշտութիւնը ինձ կը պարտիս» երգեց Քնարը :

«Համակրութեան համար մեզ շնորհակալ եղիր» ըսին ծառերը :

«Վսեմութեան համար մեզ շնորհակալ եղիր» գոչեցին լեռները :

Այն ատեն Ջեֆիւռը դադրեցաւ եւ ըսաւ մեղմիկ, «Ո՛հ կը տեսնեմ Թէ պարզապէս հով եմ ես և ոչ այլ ինչ և իմ յատկութիւններս կըստանամ այն առարկայներէն որոց մէջէն կանցնիմ. յաւէտ ստորնացուցիչ՝ այլ ճշմարիտ է կարծեմ» :

«Ինչու կիրք ելեր ես» ըսաւ Անձրեւը Առուակին «և կը վազես աղմկայոյզ, չորս կողմդ ցեխ և աղտեղութիւն ցայդեցնելով» :

«Ես հանդարտ և խաղաղ էի բոլորովին, բայց դուն էիր որ եկար և աղմկեցիր զիս» : ըսաւ Առուակը, ահա վէճը միշտ այսպէս կը ծագի. մարդիկ յանցանքը կը նետեն այն անձին վրայ զոր կը նեղեն :

«Աստուած իմ» ըսաւ դեռահաս դաշտային Մուկ մը, «ո՛հ որքան կը ցաւիմ»։

«Ի՞նչ, կայ» հարցուց Սկիւռը վազելէն դադրելով։

«Տես սա վայրի Աղաւնին, իւր ձայնը սիրտս կը կեղեքէ· մտիկ ըրէ իր ողբագին շեշտերուն, որքա՜ն սրտառուչ, որքա՜ն սրտմաշուեցեկ»։

«Հա՛, հա՛, հա՛» ըրաւ Սկիւռը։ «Հոգ մի ըներ բարեկամ, եթէ դուն ալ ինձ չափ այս անտառին մէջ կենայիս, դուն ալ ինձ պէս պիտի իմանայիս Թէ այդ եղանակը այդ Թռչունին խաղն է. այնպէս որ Թէ տրտում ըլլայ Թէ տխուր մէկ եղանակ միայն ունի»։ Մի խղճար շարունակական գանգատներու վրայ։

«Ի՛նչ լաւ կը սուլեմ» ըսաւ Հովը Բանալոյ ծակին։

«Լաւ» ըսաւ Բանալոյ ծակը, «ըսել կուգես որքան լաւ ես կը սուլեմ»։

«Փիչ մը Թուղթ բեր» ըսաւ պառաւը իր սպասաւորին, և գոցէ սա բանալիին ծակը որ հով չբանի»։

Այսպէս, այլևս ոչ հովը և ոչ բանալիին ծակը սուլեց։

«Խիստ կը ցաւիմ» ըսաւ Թակարդը Մուկին· «չես գիտեր Թէ որքան ցաւ կըզգամ քեզ այսպէս բանտելուս պատճառաւ, բայց գիտես որ իմ պարտականութիւնս է այս· պարտականութեանս առջև է միայն որ զգացումներս կը զոհեմ այսպէս»։

«Շատ շնորհակալ եմ ցոյց տուած բարեսրտութեանդ համար» ըսաւ Մուկը· «բայց եթէ քու զիս բանտելդ, ճանկերուդ մէջ բռնուած ըլլալուս համար զգացած ցաւիս կէսին չափ ցաւ պատճառէ քեզ, այն ատեն քու ունեցած պարտականութեանդ կրկնապատիկն ալ եթէ ունենայիս, դարձեալ քու պաշտօնիդ մէջ հաւատարիմ չպիտի գտնուիս»։

Աստիճան Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

ԳՈԼՈՄՊԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԻՍԻ ԳԼԽԱՒՈՐ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ

Ձէքսըն Փարք, որոյ վերայ կը կանգնին աշխարհիս անզուգական Ցուցահանդիսի գլխաւոր շինուածքը, Միչիկըն լճի հարաւային եզերաց կը տարածի, ընդ երկայնութեան որոյ կը տեսնուին աստ և անդ հոյակապ և գեղաշէն կերտուած դեռատի։ Սոքա խառնուրդ մ'են համազգային իսկ ի մասնաւորի Յունական և Հռովմէական ճարտարապետական ոճերու որք ըստ պահանջման ի կիր առեալ են այլ և այլ շինուածեանց մէջ։ Շինուածեանց տեւականութեան մասին հարկ է ըսել Թէ նպատակած չեն դիմացկուն շէնքեր կառուցանել ըստ որում Արուեստահանդիսի փակուելէ վերջ դոցա մի քանին անգործածելի պիտի լինին և շատեր պիտի քանդուին ցյատակ։

Ցորժամ ի վերուստ ակնարկ մի ձգեմք Արուեստահանդիսի գրաւած 1000 արտաքոյ գետնին վերայ, պիտի նկատեմք, յետ շինուածոց, մի կղզիացեալ անտառակ Արուեստահանդիսի ճիշդ կեդրոնն որոյ շուրջն արհեստական լճակն կը բոլորէ և կը լուայ շարունակ արուեստական ափունքն անտառազարդ կղզեկին։ Ամերիկեան հանճարն ամէն ջան ի գործ դրած է Ձէքսըն Փարքի այս մասն եւս հրապուրիչ հանգամանաւք օժտելու մասին։

Վարչութեան շէնքն, Ձէքսըն Փարքի և շրջակայից վերայ ամէն ուրեք կը

տեսնուի սոյն հոյակապ շէնքն որոյ գեղաշէն գմբէթն լուսարձակ վերձակայ շէնքերէ վեր կը բարձրանայ գոռոզաբար և արհամարհանօք կը նայի դէպ ի վայր իւր դրացի կերտուածոց վերայ, և արդարեւ արժանացած իրաւամբ համայն Գոլոմպեան Աշխարհահանդիսի ճարտարապետական գոհարիկ կոչուելու։ Բազմիցս հիացած եմ շէնքին հիանալի գեղեցկութեան վերայ։ Այցելուն որ դի դառնայ չ'կրնար վրիպիլ նորա երեւոյթէն կը հայի քեզ որպէս մի անհատ ուժեր լուսանկար որոյ աչերն շեշտակի նայած են լուսագիր գործուոյն վառարանի մէջ։ Չեմ կրնար բնաւ մտավրէպ ընել այն խորհրդաւոր հակադրութիւնն զոր տեսանք Աշխարհահանդիսի բացման օրն յորժամ աչերս վեր բարձրացնելով սոյն վարչութեան Շէնքի գմբէթին ստորեւ և բոլորտիքն տեսայ Ամերիկացի բնիկ վայրենի հնդկաց հոծ բազմութիւն մը իրենց ազգային հնամի տարազաւ հագուած, կը խորհէի իւրովի Թէ չորս դարեր ի զուր հոլոված են սա անփոփոխ ազգի վերայ և արդեօք կար միւն որ կարենար արարողութեանց ոգին ինչպէս և Աշխարհահանդիսի գլխաւոր նպատակն ըմբռնել և անդրադառնալ անցելոյն վերայ և տեսնել Թէ արդեօք ինչ փոփոխութիւն կրած էին իրենց յընթացս սոյն չորս հարիւր ամաց որոյ միջոցին նորեկ Ամերիկացիք այնքան մեծ զարգացում ունեցած էին գիտութեանց՝ գեղարուեստից և ամէն ճիւղի մէջ և այդ օրն նուիրեալ էր մարդկութեան յառաջացման չորեքհարիւրամեկի նաւակատիքն կատարել համայն ազգաց համախմբմամբն։ այլ աւա՛ղ որ իրենք ազգովին հանարեան Թէ ոչինչ ունէին ի տես դնելու, են ու կը մնան նոյն անընտել և վայրենաբարոյ ազգն գրեթէ ճիշդ այնպէս որպէս գտաւ Գոլոմպոս, օրուան դիւցազնն, իբր չորս հարիւր ամօք յառաջ։ Այսու հանդերձ անտարակոյս չափով իւիք կը գաղափարէին Սպիտակ մարդոց ըրած մեծ զարգացումը և կը հակադրէին այն շէնքը որոյ գմբէթի բոլորտիքն շրջապատած էին իրենց ամենապարզ խրճիթներու հետ։ Ամերիկա, աշխարհի կրտսերագոյն երկիրն աշխարհագրական և կամ պատմական տեսակէտիւ, իւր գոյութեան 400րդ տարեդարձն կը կատարէր և մարդկութիւնն հաւաքուած էր մասնակցելու սոյն վեհ արարողութեան։ Իսկ գալով մեր նախնական նիւթոյն։ Պաշտօնական տեղեկագրոց նայելով 435000 տալէս ծախս եղած է և զայս բաղդատելով շէնքերու հետ աւելի սուղի նստած է ընկերութեան վրայ։ Վարչութեան շէնքն ձէքսըն դարաստանի բարձրագոյն դիրքը գրաւած է, իւր առջեւ ունենալով մեծ լճակին մի կողման վերայ փոխադրութեան և միւս կողման վերայ ելեքտրականութեան շէնքերն։ Շէնքն քառակուսի ձեւ մ'ունի. մէջտեղն բոլորակ պարտէզ մը որոյ վերայ 250 ոտք բարձրութեամբ գմբէթ մի կը բարձրանայ և չորս անկեանց վերայ կը կանգնին շէնքին կողմնական մասերն իւրաքանչիւրն մէկ մէկ անկեան վրայ որք կը միանան կեդրոնական գմբեթին հետ։ Ճարտարապետական տեսակէտիւ շէնքն աւելի նմանցուած է Գաղիական վերածնեալ ճարտարապետական ոճոյն։

Չորս դրանց երկու դին խորհրդաւոր հանգամանք հսկայական արձաններու խմբեր կան, որք կը ներկայացնեն ըզբնութիւն այլ և այլ վիճակներու մէջ, ինչպէս չորս տարերքն զապեալ և անզուսպ դրիւք դրանց ճակատան վերեւն

կ'երեւին ոսկետառ արձանագրութիւնք որք կը համառօտեն Գոլումպոսի կենսագրութիւնն։ «Քրիստափոր Գոլումպոս ծնաւ ի Ճենեվա յամին 1446, տասն և չորս տարեկան էր երբ առաջին անգամ ծովու վրայ նաւարկեց։ Սպանիոյ ծառայութեան մէջ մտաւ 1466 Յունիս 21 ին»։ Մի ուրիշ դրան վրայ կ'երեւի հետագայ արձանագրութիւնն։ «Գոլումպոս Փռէշոսէ նաւարկեց երեք փոքր նաւերով Օգոստ. 3 ին և 1492 ի Հոկտ. 12 ին. Պահմոմոց կղզեաց միոյն վրայ ցամաք ելաւ», և դարձեալ մի այլ դրան վրայ, «Գոլումպոս Ֆէրտինանտէ և Իզապէլլաէ Սպանիոյ վեհապետներէն, ընդունեց մի գործակատարութիւն իբր ծովակալ խուզարկու նաւատորմիղ մը յամին 1492 Ապրիլ 3ին»։ Իսկ չորրորդ դրան վրայ, «Գոլումպոս Նոր աշխարհն գտնելէ վերջ ուրիշ երեք ծովագնացութիւններ եւս կատարեց հետագօտութեանց նպատակաւ, և մեռաւ ի Վալլատոլիչ Սպանիա, յամին 1506 Մայիս 1 ին»։ Գմբէթի ներսի դին պարզ գեղեցկութիւն մ'է և ճարտարապետական տեսակէտիւ կըրնայ նոյն իսկ մրցման մտնել շատ մը համբաւեալ գմբէթներու հետ։ Չորս անկեանց վերայ կը կանգնին վարչութեան քառայարկ պաշտօնասենեակք, յանձնաժողովոյ անդամոց գրասենեակներն, նամակատուն, դրամատուն և ճաշարան։

Գետնայարկէն իբր 40 ոտք բարձրութեամբ ութը կամարներ կ'ելլեն. սոցա միջեւ գտնուած պարապութիւնն գրաւեալ տախտակներով որոց վերայ ոսկի տառերով գրուած են երկրիս այլ և այլ ազգաց անուանքն որք ներկայացեալ են Գոլումպեան Ցուցահանդիսի մէջ։ Սոցա վերեւ կը տեսնուին իգական նկարներ հրեշտակային կերպարանաւ, որք իրենց ձեռքերէն կախ ունին աշխարհի զարգացման պատմութեան մէջ նշանաւոր գիւտ մը կամ դէպքի մը արձանագրութիւնքն, որպիսի են «Կոպեռնիկոս Արեգակնային դրութեան վերաբերմամբ ունեցած վարկածն բացատրեց 1445 ին։ «Նեւտոն հանրութեան օրէնքն հրատարակեց 1687 ին։» «Մօրս կատարելագործեց ելեքտրական հեռագրոյ գիւտն 1837 ին» և նմանիք։ Ասոնցմէ վեր կ'երեւին աշխարհի նշանաւոր անձանց անուանքն, գիտական տեսակէտիւ, որպիսի են Պտղոմէոս, Պղատոն, Հումպոլդ, Հերշել, Ֆրանքլին, Ակասեղ, Նեւտոն և այլք։ Գմբէթի կեդրոնն գրաւող նկարուց մէջ նկատելի է կնոջ մը պատկերն ձեռնաբաց դիրքով, իւրաքանչիւր ձեռաց մէջ ունի անթառամ տերեւներէ հիւսեալ պսակ մը իւր առջեւ գտնուողներէ մին պսակելու դիտաւորութեամբ։ Սոյն կեդրոնական նկար Գոլումպեան Ցուցահանդիսի ոգին կը ներկայացնէ մահկանացուի կերպարանաւ իւր գլխոյ վերեւ ունենալով W. C. E. տառերն խոշորագիր (World Colombian Exposition)։ Աշխարհահանդիսի Ոգւոյն առջեւ ծնրադրած նկարք կը ներկայացնեն Գրականութիւնն, Ուսմունք, Արուեստք, որոց պատիւներ կուտայ Գոլումպեան Ոգին։ Կեդրոնի մէջ դարձեալ կ'երեւի Ապողոն բարձր քահոյից վերայ բազմեալ. սա եւս զբաղած է յաղթականներու, արուեստից և ուսմանց առաջնորդներու պատիւներ շնորհելով։

Գոլումպոսի մի մեծադիր արձանն կը կանգնի շէնքին արեւելեան դրան առջեւ։ Այս արձան իւր պատմութիւնն ունի։ Լուի Կրտէնս սկսաւ գործն՝ սակայն անկարող լինելով լրացնել զայն՝ իւր եղբօր աշակերտաց միոյն, Օր. Մէյրի Լո-

բէնիսի յանձնեց։ Արձանագործուհին գործն յառաջ տարաւ իւր վարպետին հսկողութեան ներքեւ։ Արձանն կը ներկայացնէ պ'Օլոմպոս ունենալով աջ ձեռաց մէջ Փասթիլիոյ և Արսկօի պրօշակներով, մինչ ձախ ձեռօք բռնած է մի սուր դէպ ի վար դարձած։ Դէմքն կը տարբերի մեզ ծանօթ նկարներէ, ըստ որում անմօռուս է։

Վարչութեան Շէնքն գեղեցիկ է ի ցերեկի իսկ գեղեցկագոյն ի գիշերի, մանաւանդ յորժամ գմբէթի վերայ և բոլորտիքն կսկսին փոքրիկ ելեքտրական ճրագներ վառիլ որոց իւրաքանչիւրն տասնեւվեց մոմի լոյս կ'արձակէ։ Եւ յորժամ շէնքն իւր ելեքտրական լուսարձակ վերարկուն կը հագնի յայնժամ Վարչութեան Շէնքն առաւել վիպային շէնքի մը կերպարանն կզգենու քան իրականի։ Եթէ դիցաբանական դարու մէջ ապրէինք յայնժամ աւելի պիտի նախընտրէի տատուածոց բնակավայրն կոչել զայս չէնքն և քնաւ չեմ կարծեր Թէ սխալած կր լինէի։

Ն. Ց. ԳԱՍԱՊԵԱՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ՕՏԱՐԱԿԱՆԸ

Անցեալ Յուլիս ամսոյ 9ին գիտական աշխարհը զարմացում մը ունեցաւ, երբ ծանուցուեցաւ Թէ նոր գիւտաւոր գտնուած է Ամերիկայի Սոլթ Լէյք կոչուած քաղաքի Բրօֆ. Ալֆրէտ Բորտամ ատաղաբաշխէն։ Հետեւեալ իրիկունը Բոչեսթըրի գիտարանէն ատեան ղալն Բրօֆ. Սուիֆթ և Բրօֆ. Մէյն։ կը նկարագրուի իբր յետին ծայր չոշղողուն առարկայ մը. գլուխը երկրորդ կամ երրորդ կարգի մեծութիւն ունեցող աստղի մը չափ և պոչը հինգ աստիճան երկայնութեամբ։ Երբ առաջին անգամ տեսնուեցաւ Մեծ Արջին մօտերն էր և միայն քսան միլիոն մղոն հեռի երկրէս։ Մեղմէ հեռանալու և արեւին մօտենալու վրայ էր։ Երբ Բրօֆ. Բրիտպի Յուլիս 14ին կը դիտէր գիտաւորը Վաշինկթընի Նաւային գիտարանի մեծ հեռադիտակով, տեսաւ որ լուսոյ հոսանք մը, միլիոնաւոր մղոն երկայնութեամբ, և լուսինին իբր երեք չորեքհարիւր անգամ լայնութեամբն, կը բղխէր անկէ։ Բնաբերեալը խիստ դեղեցիկ՝ բայց անբացատրելի էր, կրնայ ըսուիլ միայն Թէ Թերեւս գիտաւորը բարեշրջման գործողութեան մը մէջ է։ Այս օտարոտի այցելուին նկատմամբ նշանաւոր իրողութիւն մը սա է որ առաջին անգամ տեսնուեցաւ լոկ աչքով։ Ընդհանրապէս գիտաւորի մը մերձեցումը դէպ ի մեր երկիրն կը նշմարուի հեռադիտակով՝ լոկ աչքով տեսնուելէն շատ առաջ։ Այս կը նշանակէ Թէ գիտաւորը կը ճամբորդէ անըմբռնելի արագութեամբ մը, ապա Թէ ոչ հեռադիտակը պիտի գտնէր զայն դեռ գիտաւորը այնքան մեզ մօտ չեկած։ Այս գիտաւոր բոլորովին նոր է աստղաբաշխներուն համար։ Ասկէ առաջ տեսնուած ամէն գիտաւորներէն տարբեր է, և աստղաբաշխք կը կարծեն Թէ այնպիսի ահագին չրջան մը պէտք է ունեցած ըլլայ այն որ տեսնուած չէ և երկրիս այցելութիւն ըրած չէ բազմաթիւ դարերէ հետէ, այն տեսնելէն հետէ երբ սկսան արձանագրուիլ երկնից դիտողութիւնք։ Անոր երեւումը ճշմարիտ զարմացում մը պատճառեց գիտական անձանց, որովհետեւ իր գոյութիւնը անծանօթ էր մինչեւ յարդ։

ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՒՆ ԵՒ ՉԱՐԻՆ ՄԷՋ ՏԵՂԸ

Մարդս այնպիսի զարմանալի էակ մ'է որ, ըստ ինքեան բարի և օգտակար եղած չատ բաներ դէշի և վնասակարութեան կրնայ փոխել։ Մինչեւ անգամ աղօթք՝ ողորմութիւն՝ ծոմապահութիւն, իւրեանց էական նպատակներէն չեղեալ գործածութեամբ կրնան ի ցոյց մարդկան և այլ ուրիշ անարգ չարժառիթներով կատարուած մեղքի և մոլութեան փոխուիլ։

Ուսմունքը յիրաւի չատ գովելի է։ և ուսման սէրը բանականութեան անմահ կարողութիւնները աղնուացնող և բարձրացնող տարերք մը կրնայ համարուիլ զայն ունեցողին մէջ, սակայն եւ այնպէս տեսնուած է որ սա ալ չարաչար և սխալ գործածութեամբ չատ անգամ մեղայ և մոլութեան փոխուած է։ Բայց ինչպէս որ աղօթից և ողորմութեան ոմանց վրայ չարաչար գործածութիւնը տեսնուելուն համար սոյն պարտաւորութեանց դէմ խօսիլն ու ատոնց սէրը մարելու և խափանելու ձեռնարկելը ամբարշտութիւն է՝ նոյնպէս ալ ուսման ոմանց վրայ չարաչար գործածութիւնը տեսնուելուն համար անոր դէմ խօսիլն և անոր սէրը մարելու ու խափանելու ձեռնարկութիւնը անիրաւութիւն և աններելի յանցանք է։ Ոակին՝ անոր հետ խառնուած աղտեղութեանց պատճառաւ առ ոչինչ համարելը յիմարութիւն է։

Արդ՝ կեանքը վախճան մը ունենալուն պէս, եթէ ամենայն ինչ վախճան ունենային՝ այն ատեն մարդիկ չափով մը ազատ պիտի ըլլային առաքինութեան և մոլութեան, ուղղութեան և սխալանաց մէջ տեղը ուզած ընտրութիւնն ընելոյ։ Եւ թէպէտ ամբարշտութիւնն և անիրաւութիւնը աստուածպաշտութենէ և արդարութենէ նախամեծար համարելով գէշ և սխալ ընտրութիւն մը ընէին՝ այսու ամենայնիւ անոնց ըրած այս մեծ սխալանաց արդիւնքը կեանքերնուն հետ վերջանալուն համար անոնց յիմարութիւնն ալ կերպով մը կրնար ներելի ըլլալ։ Բայց հիմա բանը այնպէս չէ. այս մահկանացու կեանքին վախճանը այնպիսի կեանքի մը սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ, որ հանդերձեալ աշխարհի մէջ յաւիտենական տեւողութիւն մը պիտի ունենայ, անոր թէ մէկը հաւատայ և թէ չհաւատայ, թէ փափաքի և թէ չփափաքի։

Ա.յն դարձեալ կենաց տեւողութեանը վրայ ո՛վ կարող է լիուլի ըմբռնումմ մը ունենալ։ Անշուշտ չատերը կարող են ըսել թէ այնպիսի տեւողութիւն մ'է, որ յաւիտեան է։ բարի՝ սակայն յաւիտեան բառին ինչ նշանակելը արդեօք կրնամք հասկըննալ։ Ո՛չ՝ ոչ՝ մինչեւ անգամ ամենամեծ կարողութիւններ ունեցողներ կարող չեն զայն լիովին հասկնալու, բայց ի անհուն կարողութեան տէր եղողին որ անսկիզբն և անվախճան յաւիտենականութեան մէջ կը բնակի։ Իսկ մեք եթէ բաղդատելու ըլլամք զայն հազարաւոր և միլիոնաւոր տարիներու հետ՝ պիտի գտնեմք որ մեր երեւակայելու կարող եղած ամենէն երկար տեւողութիւնն այնքան կարճ է անոր քով, որ բացարձակապէս անոր ամենափոքր մասը չկրնար ան-

ուանիլ։ Աւազի հատի մը համար երկրագունային մէկ մասն է կրնամք ըսել։ Ջրոյ մէկ կաթիլին համար Ովկիանոսին մէկ մասը ըլլալ կրնամք երեւակայել։ սակայն տարբերու եւ դարերու ամենամեծ թիւը որ մարդկային հաշուագիտութեան սահմանէն դուրս է՝ տակաւին յաւիտենականութեան մաս մը չկրնար սեպուիլ։

Այս դիտողութիւնը ըստ ինքեան զարմանալի է։ բայց որչափ հաճոյական պիտի ըլլայ երբոր միտք առնումք թէ յաւիտենականութիւնը մեր հանգերձեալ կեանքին տեւողութեանը չափը պիտի ըլլայ։ Ուրեմն Աստուածպաշտութեան և ամքարշտութեան, արդարութեան և անիրաւութեան, առաքինութեան եւ մոլութեան մէջ տեղը խիստ զգուշաւոր և խոհական ընտրութիւն մը ընելու ստիպեալ եմք, քանզի ասոր արդիւնքը յաւիտենական բաժին մը պիտի ըլլայ մեզի։

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ո՜հ, գերերջանիկ օրե՛ր մանկութեան, անդառնալի՛ օրեր, ի՛նչ շուտ անցաք կենացս հորիզոնէն, անցա՛ք ոսկեթեւ երազներու նման, սրբուեցաք վարդագեղ արշալուսոյ նման կենացս անոյշ առաւօտեան մէջ։ Ի՛նչ սուրբ օրեր էին երկնային։ Երկինքէն դեռ նոր եկած ոգի մը, աւելի երկնից մօտ էի քան աշխարհի, աւելի պայծառ կը տեսնէի զերկինս քան զաշխարհ, աւելի սերտ էին այն օղակները որ զիս երկնից հետ կը կապէին։ Երկինքը զիս կը բոլորէր։ անխառն երջանկութիւնը իմ միակ սնունդս էր, անծանօթ իր մ'էր աշխարհ, իր վիշտերը, իր աղտեղութիւնները, իր դառնութիւնները, իր սիրտ մաշեցնող հոգերը գաղտնիքներ էին ինձ համար։ Որչա՜փ մաքուր էր սիրտս, անմեղութեան հայելին էր այն։ Երկինքը հոգւոյս մէջ կը ցոլանար, խորհուրդներս՝ շուշանէն աւելի անբիծ ու առաւօտեան ցօղէն աւելի ջինջ էին։ Անմեղ ժպիտը աչացս զարդն էր։

Քանկութեան այս չքնաղագեղ պատկերը, անմեղութեան շաղերովն ու շողերով փողփողուն՝ կը նկարուի աչացս առջև իբրեւ հեռակայ մի դրախտ եդեմնաբոյր։ Պատկե՛ր սրբութեան երագներով գեղազարդ, պատկե՛ր երկնից լուսով Թաթախուն։ Ո՜հ, ինչպէ՛ս աղարտեցի զայն, ինչպէ՛ս մոլութեանց սեւ կնիքը դրոշմեցի այդ անարատ պատկերին ճակատը։

Մոլութեանց Թունալից օձեր կը սողոսկին սրտիս մէջ, դժոխքի պէս սեւ խորհուրդներ կը վխտան հոգւոյս մէջ։ Դալկահար չոր տերև մ'եմ որդնակեր, պլպլուն կանթեղ մը նուաղկոտ։ Մութ է հոգիս, ցամքած է սիրտս կմաղը մ'եմ դարցած։ Ա՜հ, պատանեկութեան սե՛ւ օրեր, մո՛ւթ օրեր, Թունաւորեցիք կեանցս ակը, պղտորեցիք մաքուր զգացումներս, կաշկանդեցիք հոգւոյս ազնիւ Թռիչքը, Թարշամեցուցիք առաքինութեանց կոկոնները։ Գետնատող կիրքեր, անասնական իղձեր կը բնակին սրտիս մէջ, կը տիրեն հոգւոյս։ հոգւոյս՝ որ պատկերն էր Աստուծոյ։

Աստուա՛ծ, Աստուա՛ծ, չեմ համարձակիր առ քեզ բարձրացնել աչքերս, որ կրից բոցերով կը վառին։ Երկնից լուսաւորները վրէժխնդիր նայուածքներդ կը կարծեմ որ պատրաստ են կայծակներ

տեղալ, իմ ապերախտ գլխուս վրայ։ Աղարտեցի պատկերդ զոր մանկութեանս վրայ էիր դրոշմած, աղարտեցի անմահական ու յաւիտենական այն պատկեր։ Ովկէանոս բոլոր ջուրերը ալ չեն կարող զայն մաքրել, հրաբխային բոլոր անշէջ հուրերը չեն կարող վառել այն աղտեղի արատները, անհուն սէրդ միայն կրնայ ծածկել զայնս բայց ոչ անհետացնել։ Ո՞ր պիտի գտնեմ այլ ևս սրտի անդորրութիւն, հոգւոյ հրճուանք, երջանկութիւն անխառն։

Դարձի՛ր, ետ դարձիր, ո՛վ գեղեցիկդ մանկութիւն, դարձի՛ր, ո՛վ անմեղութեան սուրբ երկինք։ Հոսէ զով զով ցօղերդ կրակ հոգւոյս վրայ, շնչէ՛ անմեղութեան զեփիւռներդ ցանկութեամբ լի սրտիս բոցերուն վրայ։ Պատանեկութեան այս մռայլամած օրերուն մէջ կ'անձկամ շնչել մաքուր օդդ, որոյ մէջէն պարզ կ'երեւի երկինքը, ուր չեն կախուիր մութ ամպեր։ Կ'անձկամ կեանք առնել ի քէն, զի մաքուր կենաց հիւթը սպառած է յիս։

Այլ հեռուէն կը ժպտիս դու մեղամաղձիկ, կը բարձրանաս անցեալին գերեզմանէն բուրումնաւէտ շոգւոյ նման։ Ծիշատակաց բիւր երամներ կը ծուխին շուրջդ իբրեւ թիթեռունք ոսկեթեւ։ Ի՛նչ քաղցր յառիլ այդ դիւթիչ դիմացդ, ներկային մշուշներէն դառնալ այդ վճիտ դիմացդ, յիշողութեան թեւոց վրայ փոխադրուիլ կենաց այդ երկնազուարճ եդեմին մէջ, ուր ամէն ինչ խնդութիւն է համակ ու երջանկութիւն։

Ինչպէս մոռնամ զձեզ, ո՛վ տեսարանք իմ մանկութեան, հանդիսարա՛նք այս քաղցր յիշատակաց։ Ո՛վ նուիրական իմ ծննդավայր, անշո՛ւք գիւղակ, աննշան խորշիկ այս լայնարձակ աշխարհի մէջ, դու մեծարժէք ես ինձ համար, զի ի քեզ ծրարած ես մանկութեանս ոսկեղնիկ օրերը։ Աշխարհի անապատին մէջ ովասիս մ'ես, քաղցրաբոյր ծաղիկ մը, շողշողուն գոհար մը, երկնի մանրանկարն ես իմ հոգւոյս։ Արդեօք պիտի տեսնեմ զքեզ անգամ մ'ալ։ — ո՛վ գիտէ...։ Թերեւս օտար երկրի մը մէջ փչեմ իմ շունչս վերջին, օտար հողեր Թերեւս գրկեն իմ աճիւն, աչքերս Թերեւս ալ չտեսնեն զքեզ ու կարօտովդ դնեմ գլուխս սև հողին մէջ, օտար աչքեր Թերեւս Թափեն վրաս արցունք։ Բայց, ո՛վ գիւղակ, չպիտի մոռնամ զքեզ ցվերջին շունչ, քեզ օրհնելով պիտի փակեմ իմ շրթներ, և քեզ օրհնելով պիտի փակեմ իմ շրթներ, և քեզ օրհնելով պիտի բանամ երբոր անցնիմ գերեզմանի սահմաններէն իմ երկրորդ հայրենիքս երկինք, ուր պիտի վերանորոգի իմ նախկին կեանք, իմ մանկութիւն, անմեղութիւն սրբափայլ։

Ատանա Մ. Խ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ Ի ՊՐՈՒՍԱ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՈՑ

Տեարք և Տիկնայք բարեբարք։

Առաջադար. Ս. Ալիքսանեան 40, Ե. Տատուբեան 20, Ա. Երամեան 7, Ք. Ճէճիզեան 10, Եկեղեցական ոմն 10, Պ. Ծամկեմեան 10, Եկեղեցական ոմն 5, Ս. Սաղաթիէլեան 20, Կ. Ոսկիհանեան 2, Կ. Ճերմակեան 5, Ա. Ս. Ալիքսանեան 5, Ա. Անդրանիկեան 5, Կ. Վարդուկեան 5, Գ. Մ. Ակոնեան, Ո. Զարքճեան 10, Օրիորդաց ընկերութիւն 20, Օր. Լ. Ֆարնըմ 20, Ե. Ս. Մանուկեան 20, Վեր. Ա. Ճէճիզեան 5, Ս. Տէր Ա-թանասեան 5, Մ. Ե. Ճրկաեան 20, Ե. Արթինեան 5, Ե. Մ. Տօմպուլեան 10,

Ա. Գօճապաշեան 5, Զ. Մինասեան 5, Մարց ընկերութիւն 10, Ս. Պագալեան 5, Ա. Ազարեան 5, Օրիորդաց բարեգործական ընկերութիւն 20, Ի. Ոսկիհանեան 5, Ե. Կ. Ճրկաեան 54։

Գ. Կարմիրեան 20, Եղիա 6, Ոմն 16, Պարտիզակ։ Տօք. Աթանասեան 20, Ոմն 216։ Գ. Գումգումեան 24։ Ց. Պօյաճեան 40։ Տրապիզոն 108։ Շապին Գարա Հիսար 20։ Վան 60, Նոեմի Կ. 5, Մ. Մանուչարեան 20, Թէհլիլեան 35։ Խարբերդ 130։ Զմիւռնիա և Խարբերդ 247, սոյն գումարէն յիշուած են յանուանէ Թամաս Տօմեանց 20. Ե. Տէյրանեան 5 և Ղ. Գափլանեան 5։

Շնորհակալութեամբ հանդերձ մաղթենք իւրաքանչիւր նուիրատուի առատ օրհնութիւն որպէս երկնաւոր Հօրմէն։ Տարին կը վախճանի, դեռ բազումք կան որք ԿՐՆԱՆ իրենց լումաներովն մխիթարել զորբս և զայրեաս մեր յարկին տակ։ Ընթերցո՛ղ համէ դու ևս օգնել մեզ։

Պրուսա, Սեպ. 1 1893։ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ՐՈՊԷՐԹ ԳՕԼԼԷՋ

Սոյն Քոլլէճ, հաստատեալ կայսերական բարձր իրատէով, կազմակերպեալ է Եւրոպեան ու Ամերիկեան նոյն օրինակ հաստատութեանց նման, ունենալով նշանաւոր դասատուաց կաճառ մը, որով կը կառավարուի։ Նաեւ ընտիր եւ յաջողակ ուսուցիչներ՝ Հայերէն, Պուլկարերէն, Գաղիերէն, Գերմաներէն, Յունարէն եւ Թրքերէն լեզուաց համար։ Ունի գրատուն մը, իբր 8,000 հատորներէ բաղկացեալ, երկրաբանական, Հանքաբանական, կենդանաբանական և բուսաբանական հաւաքածոյներ, և Բնագիտական, Տարրաբանական, Բնախօսական եւ այլ բազմաթիւ գործիներ։

Որովհետեւ բնական գիտութիւնք մեծ կարեւորութիւն ստացած են գարդիս, նոր տնօրինութիւնք եղած են զայնս ուսանելու դիւրութիւնները ընծայելու համար, և սոյն ճիւղերու համար նոր դասախօս ևս կարգուած է։

Բոպէրդ Քոլլէճի մէջ աւանդեալ գրական և գիտական ուսմանց լեզուն Անգղիերէն է։ սակայն իւրաքանչիւր ուսանող պարտաւորեալ է ուսանիլ իր մայրենի լեզուն եւ տոհմային պատմութիւն։ Հայերէն լեզուի եւ դպրութեան համար գծեալ է ուսման կատարեալ ընթացք մը որում պարտի հետեւիլ իւրաքանչիւր հայ ուսանող։

Հաստատութեանս քարաչէն և հոյակապ շէնքերն կառուցեալ են ի Բուժկլի Հիսար, վոսփորի եւրոպեան կողմը գտնուղ բերդերուն եռեւն բլրոյ մը վրայ, որոյ դիրքը Վոսփորի ափանց վրայ գեղեցկագոյնն և ամենէն առողջարարն համարեալ է։

Քոլլէճի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտեմբեր 3/15ին։ Մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել առ Տեսչութիւն որ ի Բուժկլի Հիսար։

ԱԶԳԱՅԻՆ

—

Երուսաղէմի Պատրիարք Ամեն Տէր Յարութիւն Սրբազան Վեհ. Սուլթանէն շնորհեալ արտօնութեան մը համաձայն, նախընթաց Կիր. օր Մայրաքաղաքս ժամանեց, ընկերակցութեամբ Գեր. Սիմէոն Արքեպիսկոպոս Սեբաստացւոյ։ Կիմանամք թէ նորին Սրբազնութիւն Մայրաքաղաքս եկած է օգտիւոխութիւն մ'ընելու և իր առողջութիւնը կազդուրելու համար։

Կ. պոլսոյ Պատրիարք Ամեն Տէր Յոհաննէն Աշըգեան եւս որ անձնական տկարութեան պատճառաւ ժամանակէ մը ի վեր բացակայ էր Պատրիարքարանէն, Վեհ. Սուլթանէն շնորհեալ արտօնութեան համաձայն ի մօտոյ կը մեկնի Մայրաքաղաքէս Եալովայի ջերմուկներն ի դարմանումն իւր տկարութեան, Սոյն առթիւ Վեհափառ Սուլթանն 250 ոսկւոյ

պարգեւ մը ըրած է նմա իբրեւ ճանապարհի եւ դարմանուելու ծախք։

—

Օգոստոս 23ի Բշ. իրիկուն, ժամ 11ին միջոցները, կառքի արկած մը պատահեցաւ ի Թարապիա, որուն քիչ մնաց զոհ երթար Պաղտատլեան Վսեմ. Օհան էֆէնտիի տիկինը։

Տիկին Պաղտատլեան սովորութիւն ունէը ամեն իրիկուն Մէսար-Պուրնուլէն կառքով եէնիգիւղ երթալ, իր ամուսնոյն հետ վերադառնալու համար։ Նոյն իրիկուն սովորական պատոյտը կը կատարէր, երբ Մէսար-Պուրնուլէն Թարապիա տանող ծովեզերեայ ճանբուն վրայ, Քիրէճ-Պուրնուի մօտ, կառքին ձին խրտչելով յանկարծ. կառապանը թէեւ ամեն միջոց ի գործ դրաւ գետին ցատկեց զայն զսպելու համար, սակայն անկարող եղաւ։ Ամեհի երիվարը արշաւասոյր դէպ ի ծով դիմեց, իրեն հետ քաշելով կառքն ալ որուն մէջ կը գտնուէր տիկին Պաղտատլեան։

Հէգ կինը՝ անկարող ինքզինքն ազատելու՝ ալիքներուն դէմ կը մաքառէր յուսահատական ճիգերով և խեղդուելու վրայ էր, երբ քաջասիրտ սեղանապետդարն Պ. Բէշքովի կառապանին օգնութեան համար աղաղակներուն վրայ վազեց և ծով նետուելու անձնուիրութիւնն ունեցաւ, եւ յաջողեցաւ ազատել տիկին Պաղտատլեանը՝ նուաղումն վիճակի մէջ։

Տիկին Պաղտատլեան Պ. Բէշքովի տունն տարուեցաւ նախնական խնամոց համար և յետոյ իր բնակարանը տարուեցաւ կառքով, ուր ամեն խնամք տրուեցաւ, և այն գիշեր բժշկական խնամոց հնձարկուելով՝ երկրորդ օրը առողջութիւնը գտաւ։ Գոհութեամբ կը ծանուցանեմք Թէ այսօր բոլորովին բաչառողջ է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ՄԷՏԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սէտանի պատերազմը յորում Նափոլէոն Գ.ի հրամանաց ներքեւ գտնուող Ֆրանսական բանակը յաղթուեցաւ եւ որ 1871 (Ն. Տ) Սեպտ. 2ին անձնատուր եղաւ Նափոլէոն Գ. 80,000 է աւելի զօրքով ու զօրապետներով՝ սոյն կարեւոր դէպքի տարեդարձն որ ամեն տարի նոյն ատեր մէջ կը տօնեն Գերմանք, այս տարի եւս սովորական ցոյցերով տեղի ունեցաւ Սեպ. 2ին։ Կառավարական պաշտօնատեղիք դադրած էին գործէ, եւ ուսանողք դպրոց գացին միայն Սէտանի յաղթութեան պատմութիւնը մտիկ ընելու եւ Գերմանիոյ միութեան եւ կայսրութեան վերահաստատման վրայ բանախօսութիւններ լսելու։ Այս նոյն օր Վիլհէլմ Բ. մտաւ այս տարի Ֆրանսայէն առնուած գաւառներն իր հետ ունենալով Իտալիոյ գահաժառանգը։ Տեղացի ժողովուրդք եւ իշխանութիւնք լաւ ընդունելութիւն ըրին։ Հացկերոյթի առթիւ կայսրն ըսաւ, «Այս օրուան բաժակաճառս, ուղղեալ է առ կայսրութեան երկիրն եւ մանաւանդ առ Լոռէն։ Առ Լոռէնցիս կուզեմ սրտագին չնորհակալիքս իրենց բարեկամական ջերմ ընդունելութեան համար։ Բերկրալի դէմքերն զոր կը տեսնեմ շուրջս եւ ինձ ուղղեալ համակրալից խօսքերն զոր կը լսեմ սրտագին երախտագիտութիւն չարժեցին յիս, Հանդիսական երեւոյթն յորում կը տեսնեմ զմէց եւ չրջակայքը՝ կը յիշեցնեն իրենց թէ Լոռէն գոհ եւ հանգիստ է Գերմանական կայսրութեան մէջ գտնուելուն համար։ Այս քաղաքին բնակչաց աչքին առջեւ կը պարզուի Գերմանական մեծութեան եւ միութեան պատկեր մը. — կայսրութեան պետն եւ անոր հետ հաւատարիմ բարեացակամութեամբ եւ սերտ դաշնակցութեամբ միացեալ Գերման իշխանք, իւր ազգականք, Վեհապետք Գերման երկրաց։ Գոհութեամբ կը տեսնեմ թէ

Լոռէն հասկացած է կայսրութեան մեծութիւնն եւ իւր դիրքն այս կայսրութեան մէջ։ Հոս հասնելուս, քաղաքապետն ըսաւ ինձ. «Մեք Լոռէնցիքս հաւատարիմ եւ էապէս պահպանողական մարդիկ ենք։ Մեր միակ փափաքն է մեր գործին աշխատիլ խաղաղապէս, մշակել մեր դաշտեր եւ խաղաղապէս վայելել մեր վաստակն։» Արդ, որպէսզի այդ բան կարելի ըլլայ, եւ ապացուցանելու համար թէ ձեր միտքը գիտնալ կը սիրեմ, ահա ձեր մէջ բնակավայր մ'ընտրեցի ինձ համար, եւ չատ հանգիստ կղզամ իւրվիլլի իմ դրացիներուս մէջ։ Ասով ապահով եղիք ուրեմն թէ կրնաք խաղաղապէս յառաջ երթալ ձեր ճամբուն մէջ, եւ ձեր զբաղմանց պարապիլ։ Միացեալ Գերմանիա խաղաղութիւնը կերաշխաւորէ ձեզ համար։ Դուք գերման էք եւ գերման պիտի մնաք, օգնութեամբ Տեառն եւ մեր Գերմանական սրոյն։» Ապա ըսաւ, «Բաժակս կը պարպեմ կայսրութեան երկրին եւ հաւատարիմ Լոռէնի կենաց։»

— Ցրանաս։ Աստ երեսփոխանական ընտրութիւնք ամբողջացան, ու Հանրապետութիւնը հաստատուելէն ի վեր առաջին անգամն է որ կառավարական հոծ մեծամասնութիւն մը գոյացաւ այսպէս. 310 չափաւոր հանրապետականք, 35 հանրապետութեան յարող ազգակողմեանք որ կընէ 345 եւ այս մեծամասնութեան դէմ հակառակորդ կուսակցութիւնը կը կազմեն միւս 229 երեսփոխանք երեք տարբեր կուսակցութենէ ըլլալով։

— Լոնտրն։ Էմին փաշային ընկերացող սպայի մը նամակն հրատարակած է Սթանտարտ որով կը ծանուցուի թէ վիքթորիա Նիազա լճին եզերաց վրայ սեւերուն հետ ճակատամարտի մէջ Էմին փաշա սպանուած է։ Սպայն գտած է անագեայ տուփի մէջ նամակներ եւ հեռագրեր զոր Էմին փաշա իւր մահէն մէկ օր առաջ խմբագրած էր, եւ որոցմով հրահանգներ կուտար սեւերուն հետ ճակատամարտին համար։

— Լոնտոն։ Լորտերու ժողովը 41 ի դէմ 419 քուէով երկրորդ ընթերցմամբ մերժեց վերջապէս քոյր-կղզւոյ վերաբերեալ ծրագիրը, թէպէտ այս մերժման առթիւ օրուան նախարարութիւնը չ'հրաժարիր։ Միայն երեսփ. ժողովոյ հակառակ քուէն հրաժարման կրնայ պարտաւորել նախարարութիւնը։ Եթէ ծրագիրն երկրորդական էր, կառավարութիւնը գործն այն վիճակին մէջ կը թողու։ Եթէ կարեւոր էր, կը բարեփոխէ, եւ նոր ծրագիր մը կը ներկայացնէ երեսփ. ժողովոյն, որոյ նպաստաւոր քուէն ընդունելէն ետեւ, դարձեալ Լորտերու ժողովոյն կը դիմէ։ Եթէ երկրորդ անգամ մերժուի, նախարարութիւնը կրնայ երեսփոխանութիւնը լուծելով կոչում ընել ընտրողաց դատաստանին։ Եթէ ընտրողք նախարարութեան կողմը բռնեն, սովորաբար Լորտերու ժողովը տեղի կուտայ կամ նախարարութիւնն ու Լորտերն իրաւահոհ կըլլան։ Արդի պարագային մէջ, քանի որ քոյր-կղզւոյ ծրագիրը մերժուեցաւ, նախարարութիւնն հոգ պիտի տանի Անգղիոյ, Սկովտիոյ եւ Կալլէսի համար կարեւորութիւն ունեցող կարգ մը ժողովրդական ծրագրեր քուէարկել տալու երեսփ. ժողովոյն. յետոյ իւր մերժուած ծրագիրը նոր ձեւով մը պիտի ներկայէ երեսփոխանութեան, եւ ամենուն համար մէկէն Լորտերու ժողովոյն հաւանութիւնը պիտի խնդրէ։ Լորտերն իրենց կարծիքը պիտի չփոխեն, եւ հետեւապէս, յաջորդ տարի նորէն ընդհանուր ընտրութիւնք պիտի կատարուին, որոյ ելից համեմատ կամ նախարարութիւնը պիտի հրաժարի, եւ կամ Լորտերու ժողովը զիջում պիտի ընէ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Օգոստ. 26ի Եշ. օրուան Թուրք Լրագիրք հրատարակած էին պաշտօնական յայտարարութիւն մը ի մասին Իսկիւտարի մէջ տեղի ունեցած կասկածելի հիւանդութեան՝ զոր նոյնութեամբ կարտատպեմք ի տորեւս։

«Եօթը-ութ օր առաջ Սկիւտարի հիւանդանոցին մէջ, դարմանուելու վրայ եղող հիւանդներէ միոյն ենթակայ եղած հիւանդութիւնը կասկածելի նշաններ ցոյց տալով՝ անմիջապէս բժշկական քննութիւնը կատարուեցան. գիտական կերպով թէեւ կարելի չէ եղած հաստատել թէ երկիւղալի հիւանդութենէն է, սակայն միեւնոյն հիւանդութիւնը հոն ուրիշներու վրայ եւս տեսնուելով՝ այդ եօթը-ութ օրուան մէջ վարակելոց թիւը յիսունի հասած եւ աւտնցմէ քսան երկուքը մեռած են։ Նէ թէեւ երկրորդ քննութեամբ մ՚ալ կարելի չէ եղած հաստատել թէ կասկածելի հիւանդութիւն է, սակայն հիւանդութեան տարափոխիկ հանգամանքն ու վտանգը տեսնուած են։ Ուստի, Վեհ. Սուլթանին հրամանաւ, քաղաքապետութեան պաշտօնատան մէջ վեհ. Բրովան փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովը, որ պաշտօն ունի քննել մայրաքաղաքի առողջապահական վիճակն եւ ամեն բժշկական ու նախազգուշական միջոցներ ձեռք առնուլ, եւ որ կը բաղկանայ զինուորական ու թաղապետական բժիշկներէ եւ այլ անձերէ, որոշած է այդ հիւանդութիւնն իրրեւ կասկածելի նկատել, ըստ այնմ հարկ եղածն ի գործ դնել եւ հիւանդանոցը չղթայի ներքեւ առնելով՝ յարաբերութիւնները արգիլել։ Ըստ այդ որոշման անմիջապէս հարկ եղածն ի գործ դրուած եւ պէտք եղած գիտական միջոցները ձեռք առնուած են։

Կայս. Իրատէի մը համաձայն՝ չորս յանձնաժողովներ կազմուած են որք վերոգրեալ յանձնաժողովոյ իրաւասութեանը ենթարկուած են։ Այդ չորս յանձնաժողովներ, որոց իւրաքանչիւրը պիտի բաղկանայ հինգական անձերէ, զինուորական երեք բժիշկներէ, առողջապահական բժիշկէ մը եւ դեղագործէ մը, առողջապահական հարկ եղած միջոցները ձեռ առնելով հանդերձ՝ ձրիաբար պիտի դարմանեն իրենց դիմող աղքատներն ու պանդուխտները։ Այդ յանձնաժողովներ որք կազմուած են Վոսփորի, Պէշիքթաշի, Բերայի, Պոլսոյ ու Սկիւտարի կողմերը, տասներկու օր առաջ կազմակերպուելով իրենց պաշտօնին ձեռնարկած են։

«Մեր Ողջատափառ եւ ամենողորմած ու ամենագթած Կայսրն՝ Իւր բարձր հովանւոյն ներքեւ ապրելու բարեբաղդութիւնն ունեցող բոլոր հպատակաց հանգստութեանն ու անդորրութեանը համար ըրած կայսերական անթիւ չնորհաց վրայ յաւելումմ մը եւս ըրած է՝ Իւր մայրաքաղաքի բնակչաց առողջութիւնը պահպանելու մասին այս կերպով եւս Իւր գթութիւնն ու չնորհները սփռելով։ Ցիրաւի, կայսերական այս մեծ չնորհին համար երախտագիտութիւն յայտնել անկարելի է. ուստի բարեմաղթութիւնք եղած են վասն կենաց եւ բարօրութեան վեհ. Սուլթանին, բարեմաղթութիւնք, որք իւրաքանչիւր հպատակի համար անհրաժեշտ պարտականութիւն մ՚են։

«Գոհութիւն Աստուծոյ, կայս. կառավարութեան մայրաքաղաքին մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ է եւ ի վերուստ յիշուած հիւանդանոցին մէջ պատահած հիւանդութենէն զատ ուրիշ կողմերու մէջ տարափոխիկ հիւանդութեանց նշան մը չէ տեսնուած։ Հիւանդանոցին մէջ ալ, իրրեւ արդիւնք ձեռք առնուած գիտական միջոցներու ու ջանամոց, մէկ քանի օրէ ի վեր այդ տեղ հիւանդութիւնը թեթեւցած ու նուազած է եւ մոռհոգութիւն պատճառող ամեն պարագայ անհետանալու վրայ է։

«Հետեւաբար ներկայ պաշտօնական յայտարարութեամբ կը ծանուցուի իրաց ճշմարիտ վիճակը»։

— Ըստ Վեհ. Կայսեր հոգածու տնօրէնութեան հարցուած ըլլալով Պ. Բասթէօռի կարծիքը ի մասին այն առողջապահական միջոցներուն զորս հարկ է ձեռք առնուլ երեւան եկած կասկածելի հիւանդութեան առաջքն առնելու համար՝ Պ. Բասթէօռ պատրաստութիւն յայտնած է իր աշխատանոցի բժիշկներէն մին Մայրաքաղաքս ղրկելու սոյն նպատակի համար։ Արդ, ընդունուած ըլլալով Պ. Բաս-

թէօռի սոյն առաջարկ ի մօտոյ պիտի գայ այդ բժիշկն ու պիտի անդամակցի Բաղաքապետութեան պաշտօնատան մէջ գումարուած բժշկական մասնախմբին։ Այսու տնօրինութեամբ անտարակոյս առաւել եւս կամքողջացուին համաճարակին դէմ ձեռք առնուած միջոցները։

Վերջին լուրէ մը կը տեղեկանանք որ Կայս. Կառավարութեան հրաւէրին վրայ, բժիշկը որոյ անունն է Տօքթ. Շանթմէս մինչեւ յառաջիկայ Շբ. երեկոյ կը ժամանէ մայրաքաղաքս։ Ցիշեալ բժիշկը ոչ միայն Ֆրանսայի, այլ եւ բոլոր Եւրոպիոյ մէջ մեծ հռչակ կը վայելէ կրսուի։ Հեղինակութիւն մի է իրրեւ միգրոպագէտ, որպէս է Պ. Բասթէռռ։ Ինքը վեց ամիսէ ի վեր ընդհանուր օգնական — քննիչի պաշտօն կը վարէ Ֆրանսայի առողջապահական հաստատութեանց։

— Վեհ. Սուլթանը հրամայած է որ զինուորներուն Բասթէռռի գործիքներով զտուած ջուր տրուի։

— Բարձ. Մեծ. Եպարքոսը հարկ եղած հրամանները տուած է ներքին գործոց նախարարութեան, արգիլել խառնուրդ կարագներու մուտքն ինչպէս նաեւ թէ՛ մայրաքաղաքիս թէ՛ Թուրքիոյ ուրիշ մասերուն մէջ անոնց պատրաստութիւնը։ Նոյնպէս հրահանգ մը պատրաստել, որպէսզի Թուրքիոյ մէջ ամենէն ընտիր կարագները պատրաստուին, համաձայն արհեստին պահանջած պայմաններուն։

— Վեհ. Սուլթանն տեղեկանալով որ Պէլկրատ գիւղի բնակիչներն իրենց լաթեղէնները կը լուանան այն ջրամբարներուն մէջ որոյմէ Կ. պոլսոյ ջուրը մասամբ կը հայթայթուի, հրամայած է արգելուլ այդ լուացքներն որ հանրային առողջութեան կրնան վնասել, եւ ուրիշ ջուր մը ցուցնել գիւղացւոց տնային պէտքերուն համար։ Կայսերական այս հրամանին վրայ, Ոստիկանութեան եւ Բաղաքապետութեան պաշտօնեաները ղըրկուեցան իսկոյն ի Պէլկրատ, տեղւոյն վրայ հարկ եղած միջոցները ձեռք առնելու եւ պէնտերուն ջուրերը աղտոտութենէ զերծ պահելու համար։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Մ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ

ԵՒ

ԹՈՒՐՔԵՐԷՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԳԱԼՈՒՍՏ ԳԱՑՃԳՃԵԱՆ

Սոյն երեք լեզուական գործնական բառարան Ն. Ճ. Աբամեան մաքուր տպագրութեամբ լոյս տեսած լինելով՝ Հայ գրականութեան մէջ մեծ պակաս մը լեցնելու յարմարութիւնն ունի. մանաւանդ թէ՛ հայախօս եւ թէ՛ թրքախօս Ազգայնոց օգտին մեծ ծառայութիւն մը պիտի կարենայ մատուցանել։

Կը վաճառուի ի գին 50 *դահեկանի։*

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը

հատոր Ա.

Ա. չրջան ի սկզբանէ հայ լրագրութեան (1794) *մինչեւ* 1840։ *Բ. Շրջան* 1840 *էն մինչեւ* 1860։

Մէկ լուսատիպ պատկերով

ԳՐԵՑ Հ. ԳՐԻԳՈՐԻՍ Վ. ՔԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

Մխիթ. Ուխտեցի

Վիէննա Մխիթարեան Տպարան

Տէր եւ Խմբագիր

Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻՒՃԻՒՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Սուլթան Համամ փողոց, թիւ 14